

# ԼԵՅՍ

ԿՐԹՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ  
ՊԱՆՏՈՆԵԿԱՆ ԵՐԿԱՄԱՆԹԵՐԻԹ  
ԳԵՆԵՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԼՆ



**LUYS** — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

**RELIGIONS NEED TO TALK**

Harvey Shepherd

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Խորէն Ա. քհնյ. Ներսէսեան

**ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹՆ ՈՒ ԱՆՈՐ  
ԳՈՐԾՕՆՆԵՐԸ**

Վեր. Վահան Յ. Թուրթիկեան

**ԲԱԲԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԷՍԷՐԵԱՆ ԵՒ  
ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ**

Գառնիկ Քհնյ. Գոյունեան

# **Religions need to talk**

## **VISITING LEADER OF ARMENIAN APOSTOLIC CHURCH URGES CHRISTIANITY, JUDAISM AND ISLAM TO PROMOTE PEACE**

One of the two world leaders of the ancient Armenian Apostolic Church, Catholicos Aram I, is also a world leader in inter-church dialogue, as moderator since 1991 of the World Council of Churches.

But his experience in the Middle East, where he is based in Antelias, Lebanon, as the catholicos of the branch of the Armenian church called the House of Cilicia, has led him to give even greater priority to dialogue between religions.

The Christian churches of the Middle East, one of the three world religions that began in the region, have “a tremendous responsibility”, he said in an interview in Montreal this week.

Christianity, Judaism and Islam “are called to play a pivotal role and become agents of peace-making, agents of reconciliation”, he told a reporter in the north-end offices of the prelacy of Canada for the house of Cilicia, next to Sourp Hagop Armenian Apostolic Cathedral.

The Orthodox pontiff, 58, was on his third pastoral visit to Montreal since he became catholicos in 1995. It was the beginning of a North American tour marking several anniversaries; the 10th of his service as catholicos, the 75th of an Armenian seminary in Lebanon, and the 1,600th of the Armenian alphabet.

“Being a Christian is not just being part of a family”, he said. “It’s also being part of a community and part of the fight being waged today for principles different from the so-called values imposed on us by so-called globalization. If we want to establish a healthy, sustainable world it must be sustained by moral values”.

While the situation in today’s Middle East may leave people insecure and helpless, it has always been a region where different cultures interacted, whether through coexistence or conflict, he said. Relations between them should move past coexistence to “a dialogue of life where our community life is built on common principles”.

Fundamentalism and “blind traditionalism” are a source of problems in all religions, he said, as is the blurring of the distinction between what is not religion in public life. “Today, religion is being exploited for non-religious purposes”.

In addition to attending weekend activities, including a liturgical celebration and a big cultural celebration in honour of the alphabet, the prelate also joined representatives of the Canadian Bible Society Monday [September 26] in launching the North American edition of a new translation of the New Testament and Psalms into modern Armenian.

The translation is part of a worldwide effort to produce a new version of the

Bible to complement an ancient translation dating back to the 5th century, which prompted the creation of an Armenian alphabet and which is regarded as one of the great achievements of early Christianity. The language of that old translation, however, is now archaic and understood by few Armenians.

The translation is largely the work of Rev. Manuel Jinbashian of the United Bible Societies, a Protestant minister based in France, in collaboration with several prelates of the Armenian Church, including Khajag Hagopian, the Montreal-based prelate of Canada. Jinbashian is currently combining duties for the United and Canadian Bible Societies with a teaching post at the Université de Montréal.

“Classic and modern Armenian are as far apart as Latin and French”, Jinbashian said in an interview.

Since the New Testament translation was completed in 1989, he said, it has been introduced into the worship of many of the world’s Armenian churches, including the liturgy that Aram celebrated in Laval this weekend, complementing the ancient translation. For example, New Testament readings are often from the new translation except for those from the first four books, known as the Gospels, which are chanted in the classical tongue.

A church official estimated that about half of Canada’s ethnic Armenians live in the Montreal area. She said there are about 40,000 Armenians in the Montreal region, attending churches of either of the two branches of the church, along with some Catholics, Protestants and religiously inactive people. (This is about double the census figure, but some ethnic Armenians identify their origin for census purposes according to the country their family actually came from, such as Lebanon).

Aram is in Ontario for engagements in Toronto, Cambridge and St. Catherines, and will head for Los Angeles Wednesday to begin the U.S. leg of his trip. He is to speak at a conference in Los Angeles on Christian responses to violence.

HARVEY SHEPHERD  
(THE GAZETTE)

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՆՁՆԱՅԱՏՈՒԿ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայց. Առաք. Ս. Եկեղեցին համայն քրիստոնէական եկեղեցիներուն մէջ ունի իր առանձնայատուկ նկարագիրը, իր ծագումով, կազմակերպութեամբ, հոգեւոր շարականներու բանաստեղծական կառուցուածքով, ցեղային նկարագրով, միատարր ժողովուրդով եւ անցեալի գոյութեան պայքարներով:

Անոր էութիւնը կ'արտացոլայ նոյնինքն իր «Հայաստանեայց Եկեղեցի» անունէն:

Այլ եւ այլ անուններով եկեղեցիներ կան, ինչպէս՝ Կաթողիկ եկեղեցի, Օրթոտոքս եկեղեցի, Բողոքական կամ Աւետարանական եկեղեցիներ: Բայց անոնք ազգային եկեղեցիներ չեն, այն հասկացողութեամբ եւ տարողութեամբ, որպիսին է՝ Հայց. Եկեղեցին, որ ազգային եկեղեցի է գերազանցապէս, որովհետեւ անոր հօտը ամբողջութեամբ բաղկացած է հայերէ:

Ան իր լեզուով, գրականութեամբ, արուեստով, ժամերգութեանց յորինուածքով եւ հոգեւոր կեանքով, ինչպէս նաեւ անցեալով ու պատմութեամբ շարկապուած է հայ ժողովուրդին հետ:

Այո, Կաթողիկ եկեղեցին իր ծաւալուն սահմաններով, մերինին հետ բաղդատած՝ շատ մեծ է, ընդարձակ եւ հարուստ. տարածուած է հզօր ազգերու մէջ, իտալացիներու, սպանացիներու, ֆրանսացիներու, իրլանտացիներու, լեհերու եւ մասամբ նաեւ գերմանացիներու եւ ամերիկեան ազգերու մէջ. փոքր չափով նաեւ միարարական քարոզչութեան հետեւանքով արեւելեան եկեղեցիներէն պոկուած հատուածներ ունի: Ասոնց մէջ յիշատակելի է յատկապէս հայ կաթողիկոսութիւնը, իր մասնաւոր կազմակերպութեամբ, որ ենթարկուած է պապական բարձր իշխանութեան:

Կաթողիկ եկեղեցւոյ պաշտօնական լեզուն վերոյիշեալ բոլոր ազգերու համար լատիններէնն էր: Միայն արեւելեան հին քրիստոնեաներէ կազմուած հատուածներուն թոյլատրուած էր իրենց նախկին եկեղեցիներուն լեզուով պաշտամունք կատարել, օրինակ՝ հայ կաթողիկներուն: Սակայն վերջերս շատ մը եկեղեցիներուն արտօնուեցաւ իրենց ազգային լեզուն գործածել:

Օրթոտոքս եկեղեցին, որուն մաս կը կազմեն Յունաստանի, Ռուսիոյ, Ռումանիոյ Պուլկարիոյ եւ Սերպիոյ ժողովուրդները, իւրաքանչիւր կը գործածէ իր սեփական լեզուն: Նաեւ Աւետարանական կամ Բողոքական եկեղեցին, որ ունի բազմաթիւ յարանուանութիւններ եւ տասնեակ միլիոնաւոր հետեւողներ, եւ որոնց մէջ Անկլիքան եպիսկոպոսական եկեղեցին, որ միջին դիրք բռնած է կաթողիկոսեան ու բողոքականութեան միջեւ եւ որ համեմատաբար, ազգային հանգամանք ունի գոնէ Անգլիոյ մէջ: Սակայն ասոնցմէ եւ ո՛չ մէկը բառին իրական հասկացողութեամբ ազգային չէ: Անոնք հետամուտ չեն իրենց հաւատացեալներուն ազգային առանձնայատկութիւնները պահպանելու եւ ամփոփուած ալ չեն իրենց ազգային սահմաններուն մէջ, ինչպէս

վիճակուած է Հայց. եկեղեցիին, բայց անոնք եկեղեցւոյ կողքին միշտ ունեցած են հօր եւ կազմակերպուած պետականութիւն:

Այո, Հայաստանն ալ ազգովին քրիստոնէութիւն ընդունած օրերուն առանձին պետութիւն ունէր եւ դաշնակից էր հռոմէական պետութեան, բայց ուրոյն կազմակերպութեամբ, լեզուով, օրէնքներով եւ ազգային աւանդութիւններով: Ան կազմուած էր բազմաթիւ նախարարութիւններէ, որոնք թագաւորի գերիշխանութեան տակ կը կազմէին միութիւն մը, նոյն դրութեամբ կազմուած է Հայց. եկեղեցին:

Եկեղեցական ժողովներու մէջ եպիսկոպոսութիւնները կը յիշուէին նախարարութիւններու անուններով, օրինակ՝ Եպիսկոպոս Տանն Սրենեաց, Եպիսկոպոս Տանն Արծրունեաց, Եպիսկոպոս Տանն Մամիկոնեանց, եւ այլն:

Թագաւորութեան գլուխը արքան էր, հայոց հայրապետութեան գլուխը կաթողիկոսն էր, իսկ եպիսկոպոսները ի մի բերող իշխանութիւնը՝ միութեան կապն էր, ազգային իւրայատուկ նկարագրով: Եւ ժողովի որ կը նստէին իւրաքանչիւր նախարարութեան եպիսկոպոսը իր աստիճանաւորումին համաձայն ունէր իւրայատուկ ակտը: Եւ անոնք կը բազմէին կաթողիկոսի աջին ու ձախին կարգաւորուած 38 ամբողջներու վրայ:

Ահա՛ Հայց. եկեղեցւոյ նուիրապետութեան կամ վարչական ձեւակերպութեան ծագումն ու կազմութիւնը, բոլորովին ուրոյն ազգային ու քաղաքական կեանքի պայմաններու վրայ, որ տարբեր եղած է Հռոմէական պետութեան մէջ յառաջ եկած զարգացման ընթացքէն:

Հայց. եկեղեցւոյ առանձնայատկութիւններուն մէջ պէտք է յիշել նաեւ այն սովորութիւնը, որ մինչեւ Ե. դար արեւելեան քրիստոնէութեան յատուկ եղած է. որն է՝ Ծնունդն ու Մկրտութիւնը միասին կատարելու սովորութիւնը: Մինչդեռ Օրթոտոքս եկեղեցին հետեւած է Հռոմէական աւանդութեան, Ծնունդը՝ Դեկտ. 25ին առանձին կատարելով եւ Մկրտութիւնը՝ Յունուար 6ին մեզի հետ: Բողոքական եւ Աւետարանական եկեղեցիներն ալ կաթողիկ եկեղեցւոյ ծոցէն ելած ըլլալով, կը հետեւին Հռոմի աւանդութեան:

Հայց. եկեղեցւոյ ծիսական կառուցուածքին մէջ ակնառու եւ բացառիկ երեւոյթ է անոր շարականներու, մեղեդիներու եւ հոգեպարար աղօթքներու գանձարանը: Սահակ Մեսրոպ, Շնորհալի եւ այլ հայրապետներ, իրենց հաւատքի ներշնչումով ու բանաստեղծական հմայիչ գրիչներով հիւսած են այնպիսի՝ հոգեւոր երգեր ու աղօթքներ, ընդելուզուած հոգեւոր, պատմական ու ազգային նիւթերով, նաեւ հայկական երաժշտութեամբ, որոնց ունկնդրութիւնը ոչ միայն կը վերացնէ հոգին, այլ նաեւ՝ հաղորդակցութիւն կը ստեղծէ նոր եւ հին սերունդներու միջև եւ կը ներշնչէ ազգային ու հոգեւոր կեանք:

Հայց. եկեղեցւոյ առանձնայատուկ նկարագրի վերոյիշեալ բացատրութիւններէն ետք, ստորեւ շեշտը կը դնենք ա՛յն իրողութեանց վրայ, որոնք յատուկ են միայն հայ եկեղեցիին ու ժողովուրդին:

Հայց. եկեղեցին, հայ ժողովուրդի կրօնաբարոյական կեանքի եւ ազգային ինքնաճանաչումի զգացումներուն սնուցիչ ու դաստիարակիչ մայրն է:

ժողովուրդէն անջատ եւ առանձին կազմակերպութիւն մը չէ՛ ան, այլ՝ ժողովուրդը իրեն կը պատկանի եւ ինքը՝ ժողովուրդին: Մէն մի հայ, ուր որ ալ գտնուի, գոց աչքերով կը տեսնէ իր մայր եկեղեցին, անոր խորանը, խաչն ու Աւետարանը:

Հայց. եկեղեցին հայուն համար ա՛յն սրբավայրն է, ուր կը գտնէ ոչ միայն հոգեկան խաղաղութիւն, այլ նաեւ կը տեսնէ հաւատքի ու ազգութեան համար նահատակուած իր ցեղին սաւառնող բերաւոր ոգիները, պատգամ կ'առնէ անոնցմէ եւ կ'ուխտէ հաւատարիմ մնալ անոնց սրբազան կոչումին:

Հայ ժողովուրդը, որպէս հոգեւոր կեանքի ու հոգիի անմահութեան հաւատացող ժողովուրդ, իր գոյութիւնը պահպանելու համար հոգևով ու սրտով փարած է մայրենի եկեղեցւոյն, անոր աւանդութիւններուն, դաւանանքին ու սրբութիւններուն: Անոնց պահպանումը ազգային գոյութեան երաշխիք դաւանելով, չէ՛ վարանած զոհելու իր միլիոնաւոր զաւակները, չէ՛ երկնչած ա՛յն թշնամիներէն, որ միայն մարմինը սպաննելու իշխանութիւն ունին:

Այս հաւատքով է, որ ապրած են եւ յետ մահու ալ կ'ապրին մեր նահատակներուն հոգիները. այս հաւատքն է, որ վերընձիւղած է հայութեան մէջ եւ դարուց ի դարս կենսունակութիւն կը ներշնչէ յաջորդական սերունդներուն:

Հայ եկեղեցին ունի երկնային նշան մը, որ կը դերազանցէ յիշեալ բոլոր առանձնայատկութիւնները. այդ՝ ճմարիտ ու աստուածային սէրն է, որ կը բղխի մէկ մայր ունեցող քոյրեր ու եղբայրներ, ցեղակից, ազգակից, արենակից, հաւատակից ու բախտակից բլլալու առողջ գիտակցութենէն:

Ան, այնքան ատեն որ իր մէջ ունի այդ աստուածային սէրը, լայնախոհութեան, ներողամտութեան եւ ուրիշներուն արժանիքները յարգելու ազնիւ հոգիով խաղաղուած՝ չի կրնար կործանիլ: Այնքան ատեն որ հայ ժողովուրդին մէջ կենդանի է այն հոգին թէ՛ մէն մի հայ մէկ մասնիկն է ազգային ամբողջութիւնը ներկայացնող մարմնի մը, ունի միեւնոյն ցեղի արիւնն ու ոսկորը, բախտն ու ճակատագիրը, թէ՛ մէն մի հայ պարտաւոր է այդ մարմնի կենսունակութիւնը պահպանելու համար իրեն ինկած ծառայութեան բաժինը սիրայօժար ընծայելու, թէ՛ մէն մի հայ իր խօսքով, գրիչով ու կեանքով պատասխանատու է ամբողջութեան առջեւ, աստուծոյ եւ իր խղճին առջեւ, Հայց. եկեղեցին չի՛ վախնար: Ան, մէկ բանէ միայն կը վախնայ. երբ՝ իր հաւատացեալ զաւակներուն մէջ սէ՛րը կը պակսի, եւ սիրոյ ու գործակցութեան տեղ՝ անմիաբանութիւն, ատելութիւն, քէն, նախանձ, անօրէնութիւն եւ անզգամութիւն կը տիրէ:

Եկեղեցւոյ կենդանութեան աղբիւրը իր սիրտն է, ուր կը հանգչի սիրոյ զգացումը: Առանց այդ սիրոյ, եթէ ան ունենայ հաւատացեալներու ստուար բազմութիւն մը եւ նաեւ պերճախօս, մտաւորական եւ ուշադրաւ պաշտօնէութիւն մը, ոչի՛նչ կ'արժէ: Պօղոս Առաքեալին խօսքով՝ եթէ հրէշտակներու լեզուով խօսինք, եթէ լեզուները տեղափոխելու չափ հաւատք ունենանք, ոչի՛նչ ենք: Սէ՛րն է միայն որ կը մնայ, կը գոյատեւէ, կը տոկայ, կը համբերէ, կը ներէ, կը ծառայէ ու կը զոհաբերուի: Յիսուս կ'ըսէ. «Յայսմ գիտացեն ամենէք-

*եան եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրեցէք զմիմեանս»:*

*Հայց. եկեղեցւոյ այս երկնային նշանը, աստուածային սէրը, թո՛ղ վառ մնայ եկեղեցւոյ ու իր հաւատացեալ բոլոր զաւակներու սրտերուն մէջ:*

ԽՈՐԷՆ Ա. ՔԶՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

## **Գերշ. Տ. Սուրեն Ա. Արք. Գաթարոյեան Հոգեւոր Տեսուչ Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ**

Ի գիտութիւն Գանատահայ Մերազն ժողովրդեան եւ յատկապէս Մոնթրէալի Հայաստանեայց Առաքելական Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ հաւատացեալներուն, կ'ուզեմք ուրախութեամբ տեղեկացնել, թէ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Խաժակ Ա. Արք. Յակոբեան եւ Ազգային Վարչութիւնը, ընդառաջելով Մայր Եկեղեցւոյ Հովիւին ու Հոգաբարձութեան դիմումին, որոշեցին Մոնթրէալ հաստատուած Գերշ. Տ. Սուրեն Ա. Արք. Գաթարոյեանը հրաւիրել, որպէս Հոգեւոր Տեսուչ՝ Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ:

Գերաշնորհ Սրբազանը, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երէց միաբաններէն է եւ երկարամեայ ու վաստակաշատ ծառայութիւններ մատուցած է իր ժողովուրդին, հայրենիքին եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ ընդհանրապէս: Ան շրջան մը ծառայած է Մոնթրէալի հայութեան, որպէս Հոգեւոր Հովիւր Ա. Յակոբ Եկեղեցւոյ եւ կարեւոր ներդրում ունեցած է ներկայ համայնքի հիմնադրութեան օրերուն: Ապա, ան առաւել քան քսանհինգ տարի եղած է Սուրբոյ Բերիոյ Թեմի ժրջան Առաջնորդը: Առողջական պատճառներով ան հանգստեան կոչուած է եւ հաստատուած Մոնթրէալ:

Սրբազան Հայրը, ընդառաջելով մեր փափաքին սիրայօժար կերպով ընդունեց օգտակար հանդիսանալ Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ եւ անոր հաւատացեալներուն ու հաստատութիւններուն:

Ուժ, կարողութիւն եւ յաջողութիւն կը մաղթեմք Գերաշնորհ եւ սիրելի Սրբազանին ու Ա. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Հովիւին, Հոգաբարձութեան եւ հաւատացեալներուն:

ԳԻԻԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԻ

# ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹՆ ՈՒ ԱՆՈՐ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ

Մշակոյթը ազգի մը հոգեկան եւ իմացական երկունքներուն արգասիքն է, անոր հոգիին ու մտքին պարունակներուն, տենչերուն, ձգտումներուն եւ ստեղծագործութիւններուն ցոլացումը՝ արտայայտուած լեզուի, գրականութեան, արուեստներու, հաւատալիքներու, կառոյցներու, կեանքի ու կենցաղի միջոցաւ: Մշակոյթը ոչ միայն ազգի մը քաղաքակրթութեան չափանիշն է, այլ նաեւ անոր գոյատեւման երաշխիքը: Ան ժողովուրդի մը անկորնչելի եւ անկողոպտելի հարստութիւնն է, որ կը բոցավառէ անոր հոգին, թափ ու թռիչք կու տայ իր պարունակներուն, ներկայ իր ձեւերուն եւ ապագայ երազներուն: Մշակոյթը ան կենսատու աւիշն է, որ ազգի մը կեանքին մէջ բիւրեղանալով կը դառնայ գիր ու գրականութիւն, դպրութիւն ու երաժշտութիւն, խորան եւ գմբէթ, արձան ու քանդակ, երգ ու պար, փառք եւ խտէպ:

Մեր պարագային՝ կրնանք իրաւամբ ըսել, թէ հայ մշակոյթը ոչ միայն ժողովուրդին հոգե-մտաւոր աշխարհի թանձրացած արտայայտութիւնն է, այլ նաեւ վիմաքարը մեր ազգային փառաւոր կառոյցին եւ պատնէշը մեր հաւաքական գոյութեան: Հայ մշակոյթը թէ՛ ծնունդն է, թէ՛ ալ «Մնուցիչ Մայրը» հայ հոգիին, որուն հայելին է, ինչպէս նաեւ անոր կենսունակութեան գրաւականը:

Անցեալին մենք եղած ենք պահպան մեր մշակոյթին, եւ փոխադարձաբար ան որպէս անառիկ բերդ՝ պաշտպանած է մեզ արտաքուստ բոլոր հարուածներէն ու վտանգներէն: Ի հեճուկս քաղաքական անկախութեան կորուստին, թշնամիներու աշխարհակալական արշաւանքներուն, եւ մեր կենաց ու մահու ճգնաժամներուն, մենք կրցած ենք պահել հայու ինքնութիւնը՝ շնորհիւ մեր ազգային գոյութեան անխորտակ կառոյցին հիմնաքար եղող մշակոյթին: Այս իրողութեան ամենէն պերճախօս ապացոյցը կը տեսնենք Յ. դարու Հայաստանին մէջ. երբ աշխարհակալ երկու տէրութիւններ կը սպառնային հայ պետականութեան եւ ազգին գոյատեւման, մեր ժողովուրդին ստեղծած մշակութային Ոսկեդարը փրկարար ու բախտորոշ դեր ունեցաւ: Սակայն ներկայիս, Արտերկրի մէջ, հայրենի հողէն հեռու, կը գտնուինք ճակատագրական ժամանակաշրջանի մը մէջ. բացասական այլեւայլ ազդակներ, նոր միջավայրերէ եկամուտ բարքեր, այլասերումի տրամադրութիւններ կը սպառնան հայուն ինքնապաշտպանութեան հզօրագոյն վահանին՝ մշակոյթին: Հիմա մեր թշնամիները ներքուստ են: Երէկ ինչ որ ուրիշը չկրցաւ ընել մեզի բռնութեամբ, այսօր մենք մեր իսկ ձեռքովը կը կատարենք՝ թուլութեան անձնատուր ըլլալով...:

Եթէ կ'ուզենք հայօրէն ապրիլ, անհրաժեշտ է երթալ «աղբիւրը լոյսին», գորաշարժի ենթարկել մշակութային այն բոլոր գործօնները, որոնք սահմանուած են մեր ճակատագիրը տնօրինելու: Անոնք ոչ միայն պատնէշ պիտի ըլլան օտար ոյժերու ներգործութեան դէմ, այլ նաեւ պիտի ջրգեղեն հայու հո-

զին եւ զօրացնեն անոր դիմագիծը՝ ի խնդիր մեր մշակութային արժէքներուն: Յիշենք անոնցմէ գլխաւորները.

## Ա. – ՀԱՅ ՏՈՒՆՐ ԿԱՄ ԸՆՏԱՆԻՔԸ:

Եթէ տունն է մարդ էակին առաջին դպրոցը, հայ տունն ալ՝ հայ մարդուն առաջին բնօրրանն ու կրթարանն է: Հո՛ն է որ ի յայտ կու գան դաստիարակութեան կարեւոր սկզբունքները եւ մշակոյթի մղիչ ոյժերը: Տան մէջ է որ կը դարբնուի նկարագիրը, կը կերտուի ոգին:

Հայ տան մէջ է, որ հայ մանուկը կը ստանայ մտաւոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային եւ ֆիզիքական կրթութեան կողքին՝ հայեցի դաստիարակութիւն: Հո՛ն կը սկսի սորվիլ մեր մեծասքանչ լեզուն, բարքերն ու սովորութիւնները, աւանդոյթները եւ հերոսական պատմութիւնը, ազգային-կրօնական տօներն ու տոհմիկ կենցաղը:

Ընտանիքն է ազգին ու մարդկային ընկերութեան առաջին եւ հիմնական միաւորը: Հայ ընտանիքը՝ մեր ժողովուրդին մանրանկարն է: Առանց ընտիր ընտանիքի կարելի չէ ունենալ ընտիր ազգ. նոյնպէս ալ հակադարձաբար: Մէկը միւսով պայմանաւորուած է ու կանգուն կը մնայ: Եթէ հայ ընտանիքը այլասերի, ազգը կ'ապականի: Անտարակոյս սփռւնքահայ կարգ մը գաղութներու մէջ տեղի ունեցող օտարախառն ամուսնութեանց ահագանգային ընթացքը ահաւոր սպառնալիք մըն է մեր ազգային երկարակեցութեան եւ ապագայ կարելիութիւններուն: Քանի որ ընտանիքը հայ ազգին հիմնաքարն է, անհրաժեշտ է որ անոր անաղարտ պահպանումը առաջնահերթ պարտականութիւն դառնայ մեզի:

## Բ. – ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ:

Եկեղեցին աստուածային այն վաղեմի հարստութիւնն է, որ առաւելաբար կոչուած է հոգեւոր սնունդ ջամբելու: Սակայն մեր ազգի պարագային, հայ եկեղեցին եղած է ամրակուռ պատնէշը ոչ միայն մեր քրիստոնէական հաւատքին, այլ նաեւ ազգային գիտակցութեան եւ ոգեւորումին: Դարերէ ի վեր պետականութենէ զրկուած Հայուն համար ան հանդիսացած է հոգեւոր պետութիւն մը, որուն վիճակուած է ստանձնել կրթական, մշակութային, հոգեւոր, քաղաքական եւ ազգային գործեր: Կրօնական հաստատութիւն մը ըլլալով հանդերձ, հայ եկեղեցին եղած է նաեւ ազգային հաստատութիւն մը – իմացական լուսաւորութեան կեդրոն մը:

Մեզի անցեալէն կտակուած ժառանգութեանց մեծագոյնը, հայկազեան այբբենարանը, Հայ Եկեղեցւոյ նուէրն է իր ժողովուրդին՝ Մեսրոպ Վարդապետ Մաշտոցի միջոցաւ: Անոր հնարած նշանագրերէն ծնան դպրութիւն եւ բանահիւստութիւն, քերթուած եւ սրբասացութիւն: Եւ այդ անկռելի գանձին լոյսին տակ ծագեցաւ մեր Ոսկեդարը:

Դարերու ընթացքին մեր հոգիներու Մնուցիչ Մայրը՝ Եկեղեցին Հայկական, Վահան Թէքէեանի նկարագրութեամբ՝ դարձաւ հայ մարդուն «ծննդա-

վայրը հողուոյն»։ Եւ այսօր ալ, որեւէ ժամանակէ աւելի, պէտք ունինք օգտուելու անոր ընծայած ներշնչումէն՝ նորոգուելու համար մեր հաւատքին ու հոգեկան պայքարին մէջ։ Մեզմէ ամէն մէկը բարոյական պարտաւորութիւն ունի նեցուկ ըլլալու իր պատկանած հայ եկեղեցիին՝ նիւթապէս եւ գործօն մասնակցութեամբ քաջալերելով զայն, որպէսզի ան կարենայ շարունակել իր սրբազան առաքելութիւնը։

#### **Գ. – ՀԱՅ ԴՊՐՈՑԸ:**

Մեր մշակութային եւ ազգապահպանման ի նպաստ կատարուող աշխատանքներուն մէջ՝ կարեւորագոյններէն մին կրթական գործն է։ Հայ դպրոցը՝ տոհմիկ դաստիարակութեան հզօրագոյն միջնաբերդն է։ Ան ամենէն ազդու հաստատութիւններէն մէկն է, ուր լաւագոյն կերպով կարելի է կրթել նոր սերունդները՝ զանոնք հայ պահելու, անոնց մեր դարաւոր մշակոյթը փոխանցելու, իրենց մէջ ազգային առողջ գիտակցութիւն ամրացնելու եւ զանոնք ապագայի գաղափարապաշտ առաջնորդներու վերածելու։

Հայ վարժարանը այն վայրն է, ուր մեր մանուկները կը սորվին իրենց մայրենի լեզուն, կը հաղորդուին Մեսրոպեան տառերուն հետ, եւ հայօրէն կը մեծնան։ Մեր Մեծաւքանէր մարմնացումն է հայ հոգիին։ Ան միայն հաղորդակցութեան միջոց չէ, այլ միտք է, ոգի է, բանաստեղծին խոսքով՝ «Հայ լեզուն տունն է Հայուն»։

Դպրոցը ըլլալով հայակերտումի լաւագոյն ազդակներէն մին, անհրաժեշտ է՝ որ ազգապահպանման պայքարին լծուած անհատներ եւ կազմակերպութիւններ յանձն առնեն կանգուն պահել այդ «Փոքր Հայաստանը», որպէսզի ան արժանաւորապէս ծառայէ «Մեծ Հայաստանին», հայ մշակոյթին եւ ժողովուրդին։

#### **Դ. ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ:**

Հայ մամուլը ոչ միայն տեղեկութիւն կը փոխանցէ, այլ նաեւ ու մանաւանդ՝ ազգային նկարագրի պահպանման գործիք է։ Մեր թերթերը պարզապէս լրատուութեան, մեկնաբանութիւններու եւ տեսակէտներու արտայայտութեան միջոց ըլլալէ զատ՝ հայ մարդուն մէջ ինքնուրոյն մշակոյթի գիտակցութիւնը արթնցնելու եւ վառ պահելու կենսական դերը կը կատարեն։ Իր կոչումին հաւատարիմ մամուլը իմացական, բարոյական եւ ազգային կենսունակ ոյժի աղբիւր է։ Յատկապէս սփիւռքահայ թերթերուն վիճակուած է հանրային կարծիք ստեղծելու եւ համահայկական մտածողութիւն ջամբելու անզանցառելի պարտականութիւնը։

Հայ մամուլը ունի անփոխարինելի դեր մը գրականութեան բնագաւառէն ներս։ Ան հիմնական ազդակն է հայ գրական լեզուին տեւական զարգացումին ու նրբացումին։ Մտածած էք երբեք, թէ մեր մշակոյթը ո՞րչափ պիտի աղքատանար առանց մեր թերթերուն։ Ուստի անհրաժեշտ է, որ զօրավիզ կանգնինք հայ մամուլին եւ օժանդակենք անոր նիւթապէս ու բարոյապէս։

Հարկ է, որ հայ թերթը՝ անբաժան ընկերը դառնայ հայ տան, որպէսզի անոր ընձեռած դաստիարակչական, բարոյական, իմացական, հոգեկան եւ ազգային ծառայութիւնները պողպատեն հայու հոգին:

## **Ե. - ՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ:**

Իւրաքանչիւր մշակութային, քաղաքական, բարեսիրական, մարզական թէ՛ այլ տեսակի հաստատութիւն իր կարեւոր դերն ու ազդեցութիւնը ունի մեր հաւաքական կեանքին մէջ: Իրենց կոչումին գիտակ բոլոր հայ կազմակերպութիւնները մեր մշակոյթի այս կամ այն երեսակը շեփորոզ եւ կերտոզ իմբակցութիւններ են: Անոնք կոչուած են ձեւաւորել մեր ազգային ինքնութիւնը, տոհմային դաստիարակութիւն ջամբել, մեր արմատները ամրացնել, խմորել ու դարբնել հայ հաւաքական մտածողութիւնը: Նեցուկ կենալու ենք անոնց՝ մեր գործօն մասնակցութեամբ եւ նիւթա-բարոյական օժանդակութեամբ. զօրացնելու ենք զանոնք՝ ներքնապէս գօտեպնդուելու համար:

Եզրակացնելով՝ շեշտենք անգամ մը եւս, որ հայ մշակոյթը մեր ժողովուրդի հոգիին հայելին է, մեր ազգային կառոյցին հիմնաքարը: Ազգ ու մշակոյթ իրարմէ կարելի չէ բաժնել. անոնք իրարմէ կախեալ են: Քանի հայ մշակոյթը կ'ապրի, մեր ազգը կ'ապրի, եւ մին միւսին գոյութեան զրաւականն է:

Տիբրոյթ

ՎԵՐ. ՎԱՀԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ  
(ԲԱՆԲԵՐ)

**«Մեր վանքերը մեր հոգեւոր կեանքին  
պահապաններն են, մեր դպրութեան եւ մշակոյթին  
քաջ աւանդապահները»:**

ՇԱՀԱՆԴՈՒՍ

# ԲԱԲԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ ԵՒ ԻՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Ստորեւ տրուած գրութիւնը Գ. Գլուխն է «20-րդ Դար/Աստուածաբանութեան Սեմին Համար (Դէմքեր եւ Գործեր)» անտիպ աշխատանքէն: Այս պարբերականին մէջ նախապէս լոյս տեսան Ա. եւ Բ. Գլուխները. առաջինը Մաղափա Արք. Օրմանեանի եւ անոր աստուածաբանական վաստակին յատկացուած, իսկ երկրորդը՝ Կարապետ Եպս. Տէր Մկրտչեանի եւ անոր աստուածաբանական վաստակին: Ինչպէս կը տեսնուի, աշխատանքս ցուցակագրական է: Կ'նզէ պարզապէս ցոյց տալ Հայ եկեղեցւոյ 20-րդ դարու աստուածաբան գլխաւոր դէմքերու հետաքրքրութիւնները եւ իրագործումները: Ինչպէս նախորդ յօդուածներու պարագային, ասոր եւս զեղչուած են ծանօթագրութիւնները:

ԳՔ

## Կենսանշում Մը

Ծնած է 1868-ին, Այնթապ: Աւագանի անունով Յարութիւն կոչուած է: 1885-ին սկսած է յաճախել ծննդավայրի Վարդանեան վարժարանը: 1889-ին կը մտնէ Արմաշի դպրեւանք: 1895-ին Օրմանեան Սրբազանի ձեռամբ քահանայական ձեռնադրութիւն կը ստանայ եւ կուսակրօնութեան ուխտ կ'ընէ: Կը կոչուի Բաբգէն արեղայ: Սարկաւազութեան շրջանին Եղիշէի Պատմութեան վրայ սկսած քննական խորաթափանց ուսումնասիրութիւնը կը շարունակէ մշակել եւ կ'աւարտէ 1896-ին ու Վարդապետական իշխանութիւն կը ստանայ Օրմանեան Սրբազանի ձեռամբ: 1897-ին Կ. Պոլսոյ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը զինք կը նշանակէ Օգնական Փոխանորդ Կիլիկիոյ Կաթողիկոսական Տեղապահութեան. պաշտօն մը՝ որ կը մերժէ ստանձնել: Կեդրոնական Վարչութիւնը անմիջապէս նոր որոշում մը կ'առնէ եւ զինք կը կարգէ Առաջնորդական տեղապահ Սամսոնի: Նոյն տարին Օրմանեան պատրիարք իրեն կը շնորհէ Ծայրագոյն Վարդապետի աստիճան: 1899-ին Ազգային Վարչութեան կողմէ կը նշանակուի Տարօնի Ընդհանուր Վանահայր եւ Առաջնորդական Տեղապահ: 1900-ին թուրք ոստիկանութիւնը կը կասկածի իր վրայ եւ Մուշի մէջ կը բանտարկուի: Ապա ոստիկանական հսկողութեամբ կը փոխադրուի Կ. Պոլիս, մինչ նոյն ատեն կ'ընտրուէր Առաջնորդ Տրապիզոնի. այս պաշտօնին գլուխ չի կրնար անցնիլ: 1901-ին Տրապիզոնի Գաւառական Ժողովը Բաբգէն Ծ. Վարդապետի ընտրութիւնը կը կրկնէ, սակայն ան չի կրնար Տրապիզոն երթալ պետական արգելքին պատճառով: Նոյն տարին իրեն Մէծիտիէի Գ. Կարգի շքանշան կը տրուի զարմանալիօրէն: 1900-1907 Կ. Պոլսոյ մէջ կրթական եւ քարոզչական պաշտօններ յանձն կ'առնէ: Յատկապէս յիշատակելի է 1905-1906 «Լոյս» շաբաթաթերթին հրատարակումը իր խմբագրութեամբ: 1907-ին Արմաշի փոխ-վանահայր եւ Դպրեւանքին վերատեսուչ կը նշանակ-

ուել: 1910-ին Եպիսկոպոսական կարգ կը ստանայ Ս. Էջմիածին՝ Գաղատիոյ թեմին համար, որուն Առաջնորդ ընտրուած էր 1909-ին: 1913-ին միամեայ արձակուրդ կ'առնէ, գուցէ երկամուսնքի հիւանդութեան պատճառով: 1914-ին Փարիզ կ'երթայ իր հիւանդութեան դարման մը գտնելու համար: Համաշխարհային Ա. Պատերազմը կը յայտարարուի: Բաբգէն եպիսկոպոս կը թողու Եւրոպան եւ կ'անցնի Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ: Գործողութեան կ'ենթարկուի եւ մէկ երկամուսնքը կը հանեն: 1918-1919 Պոստոնի մէջ «Տաւրոս» շաբաթաթերթը կը հրատարակէ: 1921-ին Տ. Եղիշէ Արք. Դուրեանի երուսաղէմի պատրիարք ընտրութեամբ՝ կը հրաւիրուի կրթական ծառայութեան: 1927-ին իրեն կը վստահուի պատրիարքութեան պաշտօնաթերթ «Սիոն»ի խմբագրութիւնը: 1928-ին Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոս գինք Անթիլիաս կը հրաւիրէ: 1930-ին Բաբգէն եպիսկոպոս Անթիլիաս է եւ իր նախածեռնութեամբ կը սկսի կաթողիկոսութեան Դպրեվանքը: 1931-ին Սահակ կաթողիկոս «արքութեան» պատիւ կը շնորհէ իրեն: Նոյն տարին Բաբգէն եպիսկոպոս ըստ Սահակ կաթողիկոսի փափաքին կ'ընտրուի եւ կ'օծուի Աթոռակից կաթողիկոս Կիլիկիոյ: 1932-ին իր ճիգով կը սկսի լոյս տեսնել կաթողիկոսութեան պաշտօնաթերթ «Հասկ»ը: Իր օրով Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեաներու ցանցը կը հիմնուի եւ կը կազմակերպուի: Բաբգէն կաթողիկոսի ծառայութեամբ՝ Կիլիկիայէն Անթիլիաս աքսորական կաթողիկոսութիւնը նոր կեանք կ'առնէ եւ նոր թուիչք: Ան կը վախճանի 1936-ին. մարմինը ամփոփուած է Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայրապետներու Զարեհեան Դամբարանին մէջ:

**Աստուածաբանական Վաստակ:**

Յաջորդաբար պիտի ներկայացնեմ հետեւեալ գիրքերը. Քարոզներ, Հայց. Եկեղեցին Ե. Դարու Մէջ, Հայաստանեայց Եկեղեցի (Բանախօսութիւն), Հայ Եկեղեցին, Քրիստոնէական, Դասեր Աւետարանէն (Ա. եւ Բ.), Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, Հայ Եկեղեցի, Բարեկարգութիւն Հայց. Եկեղեցւոյ եւ Վարդապետական աստիճանները Հայ Եկեղեցւոյ Մէջ:

Ա.- Քարոզներ, Ա. հատր, Կ. Պոլիս, 1904:

Գիրքը նախատեսուած է ըլլալու շարքի մը առաջինը: Սակայն նոյն անունով այլ գիրք չէ հրատարակած հեղինակը: Թէպէտ յետագային իր տպած «Դասեր Աւետարանէն» երկու գիրքերուն բովանդակութիւնները առաւելաբար քարոզներ են:

Այս գիրքը կը բացուի Օրմանեան Պատրիարքի օրհնութեան գիրով: Ապա Եղիշէ Եպ. Դուրեան Արմաշի Դպրեվանքին այն օրերու տեսուչը գրած է նամակ-յառաջաբան մը: Անիկա քարոզխօսութեան մասին տեսութիւն մըն է: Դուրեան սրբազան գրած է.«Աւետարանին պատգամաւորութիւնն է եկեղեցականին գործունէութեան կարեւորագոյն կողմը, ու անով կ'ըսնքը կրնայ մարդ-



կայնամալ քրիստոնէական բեմին վրայ եւ քրիստոնեայ հոգիներուն խորը»:

Իսկ հեղինակը սկզբնական գրութեամբ մը, զոր վերնագրած է «Յառաջաբաններ», Քարտզներու շարքը հասկցած է ի շարս այն գիրքերուն, որոնք «Մեծ Գիրքին՝ Աւետարանին» մասին են. ըստ իրեն, ուրեմն, բոլոր գիրքերը՝ որոնք Աւետարանին մասին են՝ յառաջաբաններ են պարզապէս:

Ապա տեղեկացուցած է, թէ այս գրքին բովանդակութիւնը «խօսքով ու գրչով» մշակուած է եկեղեցական բեմին համար 1902-1903 տարիներուն, իսկ անոնց մշակման վայրը եղած է Կ. Պոլսոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին:

Հեղինակը նաեւ տեղեկացուցած է, որ այս գիրքը «կ'բովանդակէ ո՛չ թէ զուտ քարոզներ, այլ քանի մը սեռէ նիւթեր, որ կրնան յարմարիլ բեմի, այսինքն՝ քարոզուելու համար» գրուած են:

«Քարոզներ»-ու հրատարակութենէն առաջ անոնք «ամփոփ ամփոփ կարգադրուած են», այսինքն՝ յօտումի ենթարկուած են:

\* \* \*

Այս գրքին յատուկ կարեւորութիւնը անոր մէջն է, որ ամբողջ բաժին մը կը վերաբերի Հայ եկեղեցւոյ եօթ խորհուրդներուն: ԻԴ. գլուխին նիւթն է Մկրտութիւնը (էջ 229-243), ԻԵ. գլուխին նիւթն է Դրոշմը (էջ 245-257), ԻԶ. գլուխին նիւթն է Վերջին Օծումը (էջ 259-264), ԻԷ. գլուխին նիւթն է Ձեռնադրութիւնը (էջ 265-278), ԻԸ. գլուխին նիւթն է Ապաշխարութիւնը (էջ 279-290), ԻԹ. գլուխին նիւթն է Ամուսնութիւնը (էջ 291-302) եւ Լ. գլուխին նիւթն է Հաղորդութիւնը (էջ 303-318):

Հեղինակը Մկրտութեան Խորհուրդը բացատրած է իբրեւ Քրիստոսի մահը: Քրիստոսի մահը՝ իբրեւ քրիստոնեաներուն կեանքը: Իսկ քրիստոնեաներուն կեանքը՝ իբրեւ Քրիստոսի կեանքը:

Դրոշմի Խորհուրդը կը կատարուի միւռոտնով: Միւռոտնով օծումը կը խորհրդանշէ Աստուծոյ շնորհքին գալը երախային վրայ: Հեղինակը գրած է. «...ի՛նչպէս որ Ս. Հոգին կ'իջնէր Յորդանան՝ Քրիստոսի վրայ, միեւնոյն Հոգին՝ խորհրդաւորուած սրբալոյս միւռոտնով՝ կ'իթափուի նորածին մանուկին վրայ: Փոքրիկներու մկրտութենէն եւ կնքումէն ետքը, շա՛տ սովորական դարձած բարեմաղթութիւններ կ'ընենք.» Աստուծոյ շնորհքը իր վրան ըլլայ. Աստուած իր շնորհքովը պահէ՛՛ եւլն.: Միեւնոյն իմաստութիւնն է որ կ'մաղթենք այդպէսով»:

«...ի սկզբան՝ կնոնքի ատեն՝ մեր եկեղեցին (...) մկրտուածին միմիայն ճակատը կ'կնքէր»: Ետքն է, որ Վերջին Օծումի խորհուրդին իւրացումով Հայ եկեղեցին սկսած է զբողմունի ատեն կնքել նաեւ ենթակային աչքերը, ականջները, քիթը, բերանը, ձեռքերը...:

Վերջին Օծումը Հայ եկեղեցւոյ մէջ ոչ թէ կը կատարուի մահուան անկողնին մէջ, այլ մկրտեալի կնքումին ատեն, որպէսզի ան մահուան առջեւ սկիզբէն ամուր ըլլայ:

Ձեռնադրութեամբ եկեղեցին վարելու եւ պահելու ծառայութեան կը

կոչուին պատրաստուած եւ «յարմար քրիստոնեաներ»։ Անոնք «եկեղեցի» կոչուած կազմակերպութեան պաշտօնէութիւնը կը կազմեն։ Եկեղեցւոյ պաշտօնէութիւնը երկու խմբաւորում ունի. փոքր եւ մեծ։ Փոքր պաշտօնէութեան մէջ եղողները դպիրները, կիսասարկաւագները եւ սարկաւագներն են. իսկ մեծ պաշտօնէութիւնը քահանայութիւնն է։ Վարդապետութիւնը աստիճան չէ քահանայութեան մէջ, այլ քարոզիչութիւնը իշխանութիւն։ Եպիսկոպոսը քահանայութեան վերին աստիճանաւորն է, իսկ կաթողիկոսը՝ ծայրագոյն աստիճանաւորը։

Ձեռնադրեալները պէտք է ըլլան անարատ եւ սուրբ։

Ապաշխարութիւնը քրիստոնեայի կեանքին մէջ կենսական է։ Աւագանէն իսկ քրիստոնեային կեանքը հաստատուած է «հաւատքի մը վրայ, որ բովանդակ արդարութիւն է, ամբողջ ճշմարտութիւն է, համակ սէր է։ Եւ ցորչափ կ'իստորի քրիստոնեայ մարդը իր հաւատքը արտայայտող այս երեք սկզբունքներէն՝ կ'սպաննէ իր ներքին կեանքը, կրօնական բացատրութեամբ կ'մեղանչէ, մեղք կ'ընէ»։ Որպէսզի ան կարենայ վերականգնել պէտք է գղջայ եւ վճռէ չկրկնել սխալը։ Ապաշխարութիւնը անհատի հոգիին խաղաղութեան համար է։

Ամուսնութեան Խորհուրդին մասին ըսած է այսպէս. «Աշխարհի մէջ եւ աշխարհի համար եթէ կայ ամէնէն մեծ խնդիր մը, որ մարդկային կեանքի հիմն ու նպատակը կը կազմէ, ամուսնութիւնն է այդ»։ Ամուսնութեան միութիւնը հաստատելու պայմաններն են փոխադարձ սէրը, մարդկային ընկերութեան բարգաւաճման ծառայող ամոլի հաճոյքը, պատասխանատուութիւնը իրարու հանդէպ, ինչպէս Քրիստոսի եւ Եկեղեցւոյ հանդէպ եւ մարդկութեան առջեւ։

Հաղորդութիւնը ճանչնալ է գՔրիստոս։ Անոր հետ լաւ յարաբերութիւն ունենալ է։ Հաղորդութեամբ մենք կը յիշենք Յիսուսի խաչը, մահը եւ յարութիւնը, այլեւ անոր պարգեւած փրկութեան կը հաւատանք։ Այս Խորհուրդը Եկեղեցւոյ անդամներէն կը պահանջէ իրարու հետ լաւ ըլլալ։

Բ.– Հայաստանեայց Եկեղեցին Ե. Դարու Մէջ, Կ. Պոլիս, 1912։

Ինչպէս տրտղոսութիւրթը կ'ըսէ, գործը գրուած է իբր մաս «Եղիշէ/Քննական Ուսումնասիրութիւն» գրքին։ Իսկ հեղինակին յառաջաբանը կ'աւելցնէ, թէ ասիկա «հատուածներ» է կը բաղկանայ, որոնք ուսումնասիրութեան Գ. Գրքին շարունակութիւնն են եւ կը համապատասխանեն անոր 5-րդ, 6-րդ եւ 7-րդ յապաւուած գլուխներուն։

Հեղինակը գրած է. «5-րդ դարու Հայ եկեղեցւոյն վրայ նետուած պատմական այս արագ ակնարկը՝ շատ կարեւոր թելադրութիւններ կ'ընէ խորհողներուն»։ «Թելադրութիւններ»՝ գորս ան կենսական համարած է արդի Հայ եկեղեցւոյ համար։

Գրքին մէջ հեղինակը խօսած է Հայ եկեղեցւոյ 5-րդ դարեան վարդապետութեան (1-5), խորհուրդներուն (6-15), պաշտամունքին (16-33), պահպանման

(34-36), տօներուն (37-39), բեմին (40-42), պաշտօնէութեան (43-48), վանականութեան (49-50) եւ ոգիին (51-55) մասին: Իբր յաւելուածներ գրքին մէջ կը գտնենք «Արդի Հայց. Եկեղեցին» (56-91) եւ «Ծրագիր Հայց. Եկեղեցւոյ բարեկարգութեան» (92-97) շահեկան նիւթերը:

Արդ,

1.- Վարդապետութիւնը: Հեղինակը գրած է, թէ Քրիստոնէական դաւանանքը իր վերջնական բանաձեւը ունեցաւ Երեք Տիեզերական Ժողովներով, այսինքն՝ Նիկիոյ (325), Կ. Պոլսոյ (381) եւ Եփեսոսի (431) Ժողովներով: «Արեւելքի եւ Արեւմուտքի բոլոր եկեղեցիները ի մի ձուլող տիեզերական զօղն է այդ ժողովներուն բանաձեւուած հաւատքը»: 451-ը՝ կամ Քաղկեդոնի Ժողովը եղաւ այն թուականը, որ «վարդապետական ըմբռնումի եւ բացատրութիւններու տիեզերականութիւնը» խանգարեց:

Հայ Եկեղեցին մերժելով Քաղկեդոնի Ժողովը մնաց «քրիստոնէական վարդապետութեան տիեզերականութեան մէջ»:

Անոր վարդապետական «չըջանակ»ը «Հաւատամք»ն է: Հայ եկեղեցին պարզութիւն պահեց եւ չուզեց մտնել «բնագանցական» խնդիրներու մէջ, որոնց բնութիւնը «ո՛չ թէ քննութիւն, այլ ուղղակի հաւատք կը պահանջէ»: Հայ Եկեղեցւոյ վարդապետութեան տեղը Աւետարանն է: «Հայք Աւետարանէն անդին բան չեն ճանչցած իբր վարդապետութիւն»:

2.- Խորհուրդները: Հայ եկեղեցւոյ Խորհուրդներուն մասին խօսելով (մկրտութիւն - որով նկատի ունեցած է մանկամկրտութիւնը-, հաղորդութիւն, ապաշխարութիւն, ձեռնադրութիւն եւ պսակ) հեղինակը ուզած է յանգիլ այն հաստատումին, թէ ի սկզբանէ Եկեղեցւոյ մէջ «ընդարձակ գործարութիւն» ունեցած են Խորհուրդները, սակայն առանց «այն կաղապարուած ծիսականութեան», որ ունինք: «...կաղապարուած ծիսականութիւն»ը Խորհուրդներուն կը սպառնայ, կը խորհրդագրիկէ զանոնք: Անհրաժեշտ է վերականգնումը ոչ-կաղապարուած ծիսականութեան:

3.- Պաշտամունքը: Հեղինակը արդարօրէն գրած է, թէ քրիստոնէութեան վաղ շրջանին պաշտամունքը «չատ պարզ» էր եւ թէ՛ «5-րդ դարու Հայ եկեղեցին պահած է պաշտամունքի այդ պարզութիւնը»:

5-րդ դարեան մեր պատմագիրներէն Փարպեցի եւ Եղիշէ պաշտամունքին մասին «բաւական ատաղձ չեն ընձեռք մեզ», մինչ մեր հայրերը այն դարուն «սկսած էին ճոխացնել» զայն: Ասով հանդերձ, ցրիւ տեղեկութիւններէ կարելի է տեսնել այն ատենուան պաշտամունքին «բուն հիմք»: Հին եւ Նոր Կտակարանէն ընթերցումներ, սաղմոսերգութիւն, Ս. Գրքի վերծանում կամ մեկնութիւն, վարդապետութիւն կամ քարոզութիւն:

4.- Պահքը: Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերու պահքը Քրիստոսի չարչարանքի յիշատակութեան համար բռնուած է Եկեղեցւոյ «հնագոյն օրեր»էն: «5-րդ դարու մեր հայրերը ջերմօրէն յարգած են այն աւանդութիւնը»:

Նաեւ չորս եղանակներուն մէջ մէկական շաբաթապահքեր յարգուած են: Յետագային ասոնք կապուեցան տաղաւար տօներուն, սակայն ուշ քան

7-րդ դարը, ըսած է հեղինակը: Ան նաև ըսած է, թէ մեր 5-րդ դարեան հայ-րեբը Քառասնորդական կամ Մեծ պահքն ալ ունեցած են իբր յիշատակ Քրիստոսի քառասնօրեայ ծոմապահութեան:

5.- Տօները: 5-րդ դարու Հայ եկեղեցին՝ նման աշխարհի բոլոր եկեղեցիներուն ճանչցած է գլխաւոր երկու տօն. Քրիստոսի Մնուները եւ Յարութիւնը, իբր՝ «տօնք փրկչի»: Անիկա մարտիրոսաց տօներ ալ ունեցած է: Նաև նշխարներու կամ մասունքներու նկատմամբ յատուկ յարգանք եւ տածած է այն օրերու Հայ եկեղեցին:

6.- Բեմը: 5-րդ դարը «մեր եկեղեցական բեմին ոսկեդարն է»: Այն ժամանակ Հայ եկեղեցին շատ լայն տեղ տուած է Ս. Գրային ընթերցումներու «ճառախօսական մեկնութիւն»ին:

7.- Պաշտօնէութիւնը: Նուիրապետութիւնը անձանօթ է հայ մտքին: Անիկա արեւմտեան եկեղեցւոյ «կղերամիտ ձգտումներ»ուն արտայայտութիւն մըն է: Իրաւամբ հեղինակը ըսած է, թէ քրիստոնէութեան անյարիր է նուիրապետութիւնը:

Ըստ իրեն, Հայ եկեղեցւոյ պաշտօնէութեան մէջ նուիրապետական ձգտումները արդիւնքն են արեւմտեան եկեղեցականութեան հետ շփումներու:

5-րդ դարու Հայ եկեղեցւոյ հոգեւորականութիւնը ունեցած է կաթողիկոս՝ իբր ընդհանրական գլուխ Հայ եկեղեցւոյ: Գրիգոր Լուսաւորիչէն մինչեւ Սահակ Կաթողիկոս, այսինքն՝ չորրորդէն մինչեւ հինգերորդ դարու առաջին տասնամեակները, կաթողիկոսները ամուսնական կեանք ունեցած են:

Դարը հայ եպիսկոպոսներու «ամենէն գործունեայ ժամանակն է». «ժողովներու մէջ կաթողիկոսին հետ եւ ժողովուրդին մէջ կ'երեւին միշտ»: Անոնք վիճակային ներքին կարգադրութիւններու համար աւելի ազատ եղած են քան արդի եպիսկոպոսները: Եպիսկոպոսները իրենց վիճակներու ընդարձակ գործունէութիւնը վարելու համար օգնականներ ունեցած են, որոնք քորեպիսկոպոսներ (քաղաքի կամ գիւղաքաղաքի եպիսկոպոս) կոչուած են:

Ամուսնացեալ քահանայութիւնը նոյնչափ գործունեայ եղած է այն դարուն: Ամուսնացած եկեղեցականները ճանչցուած են երէց կոչումով: «Վարդանանց պատմութեան մէջ ամէնէն աւելի եկեղեցական կենդանութիւնը ասոնց վրայ կ'արտափայլի», գրած է հեղինակը:

Ան նշած է, թէ այն դարու գրականութեան մէջ սարկաւազութեան, սաղմոսերգութեան եւ ընթերցողութեան պաշտօններուն մասին ալ ակնարկութիւններ կան:

8.- Վանականութիւնը: Ասիկա «ոչ մեր եկեղեցւոյ կազմակերպութեան, ոչ ալ պաշտօնէութեան աստիճաններուն մէջ էական տարր մը կը կազմէ»: Ըգնաւորական այս եղանակը Հայաստանի մէջ «նշանաւոր անձեր հասուց»: Սակայն երբ ժողովուրդը ուզեց օգտուիլ «այդ չարքաշ կեանքի արտադրութիւններէն» եւ վանականները աշխարհ մտան, զեղծուը սկսաւ:

Յետ այս նիւթերուն, հեղինակը գրած է Հայ եկեղեցւոյ ոգիին մասին եւ

կոչ ուղղած թէ՛ «5-րդ դարու Հայց. Եկեղեցին պէտք է ունենանք մենք. այսինքն՝ անոր պարզութիւնն իր ամբողջ սկզբունքին մէջ»:

Ապա՝ իբր յաւելուած երկու յօրուածները. «Արդի Հայց. Եկեղեցին» եւ «Ծրագիր Հայց. Եկեղեցւոյ Բարեկարգութեան»:

Առաջինը կը բացատրէ, թէ Հայ եկեղեցին Հայ ազգին եկեղեցին է. անոր համար եւ անով կ'ապրի անիկա: Թէ՛ Հայ եկեղեցւոյ մէջ խտրութիւն չկայ աշխարհականի եւ եկեղեցականի միջեւ:

Ըստ հեղինակին, Հայ քրիստոնէութիւնը աւելի «աւետարանական» եկեղեցի է, քան վարդապետական. այսինքն՝ «աստուածաբանական նուրբ ու կնճռոտ տօկմերու դարբնոց մը չէ եղած» անիկա:

Իբր իր ժողովուրդին համար եւ իր ժողովուրդով ապրող եկեղեցի, «կենդանի կազմակերպութիւն» մըն է Հայ եկեղեցին, որ բնականօրէն «իր բարեկարգական պահանջները ունի»:

Երկրորդ յօրուածով հեղինակը պարզած է Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան իր ծրագիրը, զոր ուղղած է այն օրուայ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Տ. Եղիշէ Ս. Արք. Դուրեանի:

Ծրագրին կէտերն են.

1.- Հայ աշակերտին կրօնական դաստիարակութիւն ջամբել. որովհետեւ «առաջին բարեկարգութիւնը հայու դպրոցէն պիտի սկսի»:

2.- Եկեղեցւոյ պաշտօնէութեան համար ընտրել բարի նկարագրի տէր անձեր եւ ուսումնապէս պատրաստել զանոնք:

3.- Ժամակարգութիւնը, պաշտամունքը եւ կարգն ու սարքը պարզ եւ ազդու դարձնել:

4.- Մաշտոցը եւ ծխարանը հնագոյն օրինակներուն համեմատ սրբագրել, համառօտել եւ արդի հոգեկան պէտքերուն յարմարցնել եւ յօրինել (Մաշտոցի եւ ծխարանի համառօտումներ կատարուած են, սակայն թէ անոնք որքա՞ն արդի հոգեկան պէտքերուն կը յարմարին, այդ ալ ուրիշ հարց):

5.- Ամուսնացեալ քահանայութեան առջեւ բաց ձգել եկեղեցւոյ բարձրագոյն աստիճանները, եւ կուսակրօնութիւնը միայն կամաւոր վանականութեան վերածել, եթէ փափաքողներ ըլլան:

6.- Թեմերու որոշում եւ կազմակերպում՝ խոստափելու համար «աւելորդ պաշտօնեաներով» շրջաններ խճողել (ծրագրի այս կէտը լուծուած է, թէ եւ այլ բարդ հարցեր յառաջացած են):

7.- Ամուսնական կանոններու «գիտնօրէն եւ խղճմտօրէն» պարզացում (այս կէտը պարզացուած է արդէն. ալ ամուսնութեան համար 7 պորտեր հաշուելով զբազո՞ղ չկայ):

Գ.- Հայաստանեայց Եկեղեցի (Բանախօսութիւն), Պոստոն, 1924:

Ասիկա բանախօսութիւն մըն է պատրաստուած «Մայրենի եկեղեցւոյն պայծառութեան նախաձախնդիր Հայեր»ու փափաքին վրայ, 1924-ի Մայիսին: Շօշափած խնդիրներն են, ըստ գրքոյկին սկիզբը դրուած ծանօթութեան՝

ա.- Ինչո՞ւ պաշտպան կանգնելու ենք Հայց. եկեղեցւոյն.

բ.- Հայց. Եկեղեցւոյն կատարած դերը մեր ցեղին պահպանութեան մէջ.

գ.- Հայց. եկեղեցւոյն բարեկարգութեան գործը եւ մեր պարտականութիւնը ատոր մէջ.

դ.- Հայց. Եկեղեցւոյն առաքելութիւնը:

Բանախօսութիւնը նախապէս հրատարակուած է «Պայքար» պարբերականին մէջ՝ 1924, Օգոստոս 23-Սեպտեմբեր 11-ի թիւերով:

Յայտնեմ, որ հեղինակը վերոյիշեալ հարցերուն կարգով չէ դասաւորած իր գրութիւնը, այլ տարբեր «հանգամանքներով» եւ որոնք ահաւասիկ.

Հայ եկեղեցին իբրեւ կազմակերպուած հաստատութիւն իր պատմութեան ընթացքին կը ներկայանայ այսպէս. 1, Անիկա պահած է «քրիստոնէական առաջին դարերու հաւատքը, աւանդութիւնները, սովորութիւնները, եւ զանոնք գործածած է իբրեւ միջոց աւետարանական սկզբունքները վերածելու ժողովուրդի կենցաղին»։ 2, Եղած է ոչ թէ միայն կրօնական հաստատութիւն, այլ միանգամայն՝ ազգային. 3, Անիկա կը ներկայացնէ «ինքնօրէն եւ ինքնուրոյն յօրինուածք, թէ՛ վաղեմի եւ թէ՛ նոր»։ «Հայ եկեղեցին ունենալով հանդերձ նուիրապետութիւն, չէ՛ եղած կղերապետութիւն մը»։ «ժողովրդական» եկեղեցի մը եղած է անիկա. 4, Թէեւ «ազգային շեշտուած նկարգիր» ունի Հայ եկեղեցին, սակայն «չէ դադրած հիմնովին կրօնական ըլլալէ»:

Հեղինակը այս չորս «հանգամանքները» վերլուծելով զարգացուցած է բանախօսութիւնը:

Գրքոյկի աւարտին գետեղուած է նաեւ յօդուած մը, որուն անունն է՝ «Բարեկարգութիւն Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյն»։ Այս յօդուածին մէջ Հեղինակը Ամերիկայի Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան մասին խօսելով, ըսած է թէ՛ Ամերիկայի հայ եկեղեցականը պէտք է պատրաստուի ամերիկեան կրթութեամբ եւ դաստիարակութեամբ, քարոզները անգլերէն պէտք է ըլլան, անգլերէնով Կիրակնօրեայ դպրոցներ անհրաժեշտ է ստեղծել: Եւ եզրակացուցած է, թէ Ամերիկայի Հայ եկեղեցւոյ բարեկարգութիւնը առաջին միջոցն է «անոր պահպանութեան եւ տեւականութեան»:

Գ.- Հայ Եկեղեցին, Երուսաղէմ, 1930: Բ. տպ. Մոնթրէալ, 2002:

Գիրքը չորս բաժիններ ունի: Առաջինը կը վերաբերի Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան. երկրորդը՝ Ընդհանուր Եկեղեցւոյ Մէջ Հայ եկեղեցւոյ դիրքին. երրորդը՝ Հայ եկեղեցւոյ Առաքելականութեան. իսկ չորրորդը՝ պետութիւն եւ եկեղեցի յարաբերութեան:

Այս բոլոր բաժիններն ալ լոյս տեսած են Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պաշտօնաթերթ՝ «Սիոն»ի մէջ:

Ա.- Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ:

Հեղինակը գրած է. «Հայց. Եկեղեցւոյ բարեկարգութեան մէջ նկատի առնուելիք այնպիսի կարեւոր կէտեր կան, որոնց մօտենալու համար հերիք չէ ունենալ բաղձանք, եռանդ, համարձակութիւն, այլ մա՛նաւանդ՝ գիտութիւն,

համուլթիւն, ողջմտուլթիւն, երկիւղածուլթիւն, հաւատք եւ սէր. ամէնքն ալ անհրաժեշտ պայմաններ կրօնական եւ հոգեւոր գործերու յաջողութեան համար»:

Հեղինակին համոզուած եղած է, որ Հայ եկեղեցին պէտք է բարեկարգուի ինքն իր մէջ: Ուստի՝

1.- Ամենէն առաջ պէտք է պատրաստել «շնորհքով» եկեղեցականութիւն մը:

2.- Ժողովուրդին կրօնական դաստիարակութիւն պէտք է տալ: Եւ

3.- Սուրբ Գիրքը աշխարհաբար նոր թարգմանութեամբ մատչելի պէտք է ըլլայ բոլորին:

Բ.- Հայաստանեայց եկեղեցւոյ դիրքը քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ մէջ:

Հեղինակը բացատրած է, թէ Հայ եկեղեցին Քրիստոսի մէկ եւ ընդհանրական եկեղեցւոյ մեծ ընտանիքին անդամն է, «հաւասար դիրքով եւ իրաւունքով՝ ուղղափառ հաւատքի գետնին վրայ»:

Մինչ ժամանակին ոեւէ քրիստոնեայ կրնար որեւէ եկեղեցի մտնել եւ ունէր իրաւունքը մասնակցելու աղօթքներուն, պաշտամունքներուն եւ Ս. Հաղորդութեան մանաւանդ, սակայն այսօր նոյնը չէ: «...մէկ կողմէն դաւանանքի մէջ ուղղափառութեան չափանիշը, իսկ միւս կողմէն ազգայնականութեան գօրաւոր գագաթները խանգարեցին այդ ներդաշնակութիւնը, եւ քրիստոնէական ընդհանուր եկեղեցին տարին մտցուցին յարանուանական տարբերութիւններու մէջ»:

Հայ եկեղեցին կը մնայ Նիկիոյ «Հաւատամք»ով սահմանուած «մի, կաթողիկէ (ընդհանրական), առաքելական եւ սուրբ եկեղեցւոյ մէջ»: Եւ ան «անկեղծ սէր եւ յարաբերութիւն կը մշակէ բոլոր այն եկեղեցիներուն հետ, որոնք դաւանակից ու հաւատակից են Նիկիոյ, Կ. Պոլսոյ եւ Եփեսոսի ժողովներուն»:

Գ.- Առաքելականութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ:

Ասիկա պատասխան մըն է Հ. Վ. Հացունիի այն առարկութեան, թէ Հայ եկեղեցւոյ առաքելականութիւնը պատմական չէ:

Հեղինակը Հայ եկեղեցւոյ առաքելականութեան աւանդութիւն ըլլալը կ'ընդունի: Ան սակայն աւանդութիւն երեւոյթին նուրբ հասկացողութիւն մը կը յայտնէ: Գրած է, թէ «...աւանդութիւնը չի շինուիր, չստեղծուիր, բայց կրնայ ուսիլ եւ ամփոփուիլ, առանց կորսնցնելու բունը, էականը, կորիզը, եւ քննադատութեան որեւէ մեթոտի պաշտօնն է բուն աւանդութիւնը գտել եւ գտել ուռուցումներէն եւ ամփոփումներէն: Այն ատեն երեւան կու գայ գուտ Աւանդութիւնը, եւ ասիկա պատմական իրականութիւնն է ինքնին»:

Հեղինակը համոզուած է, թէ «ստոյգ է որ առաքելական քարոզութիւն եղած է Հայաստանի մէջ»:

Դ.- Պետութիւն եւ եկեղեցի:

Հին կամ անցեալի եկեղեցին գերծ էր քաղաքական պետերու ուղղակի

միջամտութիւններէն, եւ ազատօրէն կը կատարէր իր հոգեւոր պետերուն կամ առաջնորդներուն ընտրութիւնը: Սակայն ժամանակներուն հետ «մարմնաւորին վարիչ»ը, այսինքն՝ քաղաքական իշխանութիւնը «սկսաւ հոգեւորականի գործին միջամուխ ըլլալ» եւ եկեղեցւոյ «բարոյական հեղինակութիւնը» իւրացուց եւ զայն գործածեց յօգուտ իր շահերուն:

Պետութիւն եւ եկեղեցի բաժանման երեւոյթը արեւմտեան աշխարհին յատուկ է, աւելի ճիշդ՝ Հռոմի եկեղեցիին եւ արեւմտեան քաղաքական իրականութեան բաժանման կը վերաբերի, որովհետեւ «Հռոմի եկեղեցին իրական պետութիւն մը եղաւ իր հոգեւորական պատմութեանն իր տակ»: Արեւմտեան քաղաքական իրականութեան բաժանումը եկեղեցիէն՝ ուզեց ազատագրուել եկեղեցւոյ ճնշումէն, ջախջախել կղերապետական ախորժակները, որոնք կ'ուզէին «աշխարհական պետութիւնները» եկեղեցւոյ հնազանդեցնել:

Հեղինակը արդարօրէն պահանջած է՝ Հայ եկեղեցւոյ չնայել պետութիւն եւ եկեղեցի բաժանման արեւմտեան նայուածքով, որովհետեւ Հայ եկեղեցին «իր պատմութեան ամենէն փայլուն շրջաններուն մէջ իսկ չէ ունեցած կղերապետական այդ վտանգաւոր գորութեան շոշորը»: Հայ եկեղեցին միայն գործակցած է ազգային եւ օտար քաղաքական իշխանութիւններուն հետ՝ իր ժողովուրդի հոգեւոր, բարոյական, կրթական եւ ընկերային կեանքի բարեկարգութեան համար:

Յօդուածի վերջաւորութեան՝ հեղինակը խօսած է Սովետական կարգերու կիրարկած հակա-եկեղեցի քաղաքականութեան մասին, եւ շեշտած՝ որ «Պետութիւնը պէտք չէ որ միջամտէ եկեղեցւոյ գործերուն ոեւէ կերպով՝ ուղղակի կամ անուղղակի, յայտնի կամ լռելեայն, այլ պէտք է պահէ բացարձակ չէզոքութիւն», նոյնիսկ՝ «անտարբերութիւն»:

Ե.- Քրիստոնէական, Երուսաղէմ, 1932: Չորս անգամներ վերաիրաւարակուած. վերջինը՝ 1971-ին, Անթիլիաս:

Գրքոյկի տիտղոսին տակ գրուած է հետեւեալ բացատրականը. «Ըստ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Վարդապետութեան / Յատկապէս Պատրաստուած / Մեր Ազգային Վարժարաններու / Եւ / Կիրակնօրեայ Դպրոցներու / Ուսուցիչներուն Եւ Ուսանողներուն Համար»:

Իր յառաջաբանին մէջ՝ գրուած Անթիլիաս 19 Յունուար 1932-ին՝ հեղինակը ըսած է. «Մենք կը հաւատանք, որ Հայ ժողովուրդին զաւակները իրենց մատղաշ տարիքէն պէտք է կրթուին եւ դաստիարակուին քրիստոնէական կրօնի սկզբունքներով: / Մանկութենէն մինչեւ պատանեկութիւն երկարող տարիներ, ամենէն յարմար շրջանը կը կազմեն կրօնական կրթութեան եւ դաստիարակութեան»:

Ան յայտնած է, թէ դիւրին չէ Քրիստոնէական մը գրել այնպիսի դարու մը մէջ, «ուր մարդոց ուշադրութիւնը կեդրոնացած է դրամ շահելու դիւրին եւ դրական միջոցներուն վրայ»: Այս դարուն դժուար է Քրիստոնէական գրել նաեւ մանաւանդ ժամանակի ոգիին պատճառով, որ «հաշիւի, մեքենագիտու-

թեան, բնագիտութեան, քիմիագիտութեան, երեքտրականութեան, մէկ բառով, դրականութեան ոգի է: Իսկ Քրիստոնէականի մշակած նիւթը, ասոնց հակառակ, բոլորովին հոգեկան, բարոյական, մէկ բառով, կրօնական նիւթ մըն է»:

Հեղինակը իր գրքոյկը ներկայացուցած է իբր փորձ «քրիստոնէական կրօնի հիմնական ճշմարտութիւնները մօտեցնելու պատանութեան մտքին եւ մա՛նաւանդ հոգւոյն»: Ան գրքոյկը գրած է «այնպիսի ծրագրով մը, որ հաւատարիմ է թէ՛ Սուրբ Գրոց, թէ՛ Քրիստոնէական Եկեղեցւոյ դաւանանքին եւ մա՛նաւանդ Հայց. Եկեղեցւոյ ականդութեան»:

Նիւթերը զարգացուած են հարց եւ պատասխանի ձեւով: Հեղինակը «կարելի եղածին չափ» զգուշացած է աստուածաբանութեանէ, «տալով հանդերձ ատոր՝ նիւթին պահանջած հարկը»:

Այս գրքոյկը թէեւ գրուած դպրոցական մտահոգութեամբ, սակայն օգտակար կրնայ ըլլալ բոլոր անոնց՝ որոնք հաւատքի, «Հաւատամք»ի, Խորհուրդներուն, մարդ էակի, մեղքի, շնորհքի, բարոյագիտութեան, Եկեղեցւոյ, եկեղեցիներու տարբերութեան, Հայ եկեղեցւոյ, եկեղեցւոյ օրերուն, աղօթքի ու պաշտամունքի, հրեշտակներու, եւ պահքի մասին տարրական ծանօթութիւններ կ'ուզեն ունենալ:

Զ.- Դասեր Աւետարանէն, Ա. Շարֆ, Անթիլիաս, 1934:

Սկզբնաւորութեան հեղինակին կողմէ գրուած «ԱԶԴ»ը կը յայտնէ, թէ գրքոյկը նուիրուած է Պէյրութի Ս. Նշան եկեղեցւոյ Եկեղեցասէր Տիկնանց Միութեան, որուն նպատակն է.«վերաշինել Պէյրութի Ս. Նշան եկեղեցին, եւ հրատարակել ու տարածել կրօնաբարոյական եւ եկեղեցագիտական բովանդակութեամբ գիրքեր»:

Ապա հեղինակը գրքոյկը ներկայացուցած է իբր «ընտիր դասագիրք» մը՝ «ուսումնասիրելու համար Աւետարանի ճշմարտութիւնները. ճշմարտութիւններ՝ որոնցմով կ'ազնուանայ քրիստոնեայ մարդուն կեանքը եւ կը կատարելագործուի»:

«Մեր Սիրելի Ընթերցողներուն» վերնագրուած բացատրականով, հեղինակը տեղեկացուցած է, թէ գրքոյկին «դասեր»ը նախապէս տուած է եկեղեցւոյ բեմէն եւ «Սիոն»ի էջերուն ընդմէջէն: Եւ թէ գրքոյկով հաւաքած է 1927-1930 «Սիոն»ի մէջ ցրուած «դասեր»ը: Անիկա կը բովանդակէ նաեւ քանի մը խմբագրականներ, որոնք «Սիոն»ի յիշեալ տարիներուն մէջ լոյս տեսած են, նաեւ՝ «մէկ երկու քերթուածիկներ»:

\* \* \*

Սոյն գրքոյկի բովանդակութեան կարեւորագոյն բաժինը «Երանիններ»ու քարոզխօսական մեկնաբանութեան էջերն են (96-155): Կ'անդրադառնամ անոնց եւ ահաւասիկ:

Առաջինին անունը՝ «Ներքին Գոհունակութիւն» (96-102): Անիկա կը մեկնաբանէ «Երանի աղքատաց հոգւով, զի նոցա՛ է Արքայութիւն երկնից»

համարը (Մտ 5.3): «Հոգիով աղքատ»ը, ըստ հեղինակին, «ազահուլթեան ախտէն զերծ» հոգին է: Ան գրած է.«Մարդ պէտք է հարստանայ Աստուծով: ...ո՛վ որ իրեն, միայն իր անձին համար կը մթերէ, չի վայելեր անոր հաճոյքը. ո՛վ որ չունեցողներուն կու տայ, ո՛վ որ աղքատութեան դէմ կը կռուի իր հարստութեամբ, ո՛վ որ գոնէ իր ազգային պէտքերն ու կարօտութիւնները կը հոգայ իր ինչքերուն մթերքովը, ա՛ն է որ կը հարստանայ Աստուծով» (էջ 98):

Երկրորդին անունը՝ «Պայծառ Հոգիներու Մխիթարութիւնը» (103-109): Անիկա կը մեկնաբանէ «Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին» համարը (Մտ 5.4): Ըստ հեղինակին, սգաւորները անոնք են՝ որոնց «մահամերձ է հաւատք»ը: Երանի անոնց, «վասնզի անոնք պիտի մխիթարուին, պայմանաւ որ նետուին Փրկչին լո՛յս գիրկը եւ յանձնուին Անոր...»:

Երրորդին անունը՝ «Յաղթող Հեզութիւնը» (110-115): Անիկա կը մեկնաբանէ «Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր» համարը (Մտ 5.5): Հեղինակը բացատրած է թէ՛ «Արդի ըմբռնումով խեղճեր եւ ողորմելիներ են» հեզերը: Սակայն այդպէս չեն անոնք.«հեզերն են որ ունին ոյժ եւ հեղինակութիւն»: Ան գրած է նաեւ.«հեզերն են կրօնքը լաւ հասկցողներ ու ապրողներ, հեզերն են կեանքի դժուարութիւններուն մէջ ահօս բացողներ, հեզերն են հաշտութեան եւ խաղաղութեան միջնորդներ»:

Չորրորդին անունը՝ «Արդարութեան Գաղափարը» (116-123): Անիկա կը մեկնաբանէ «Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յազեսցին» համարը (Մտ 5.6): Արդարութեան գաղափարը «կատարելապէս չէ հասկցուած այս աշխարհի մէջ եւ թերեւս պիտի չհասկցուի ալ»: Աստուածային արդարութիւնն է միայն, որ անձին եւ ընկերութեան մէջ հաւասարակչուութիւն կը ստեղծէ: Եւ աստուածային արդարութիւնը կը պահանջէ ազահուլթեանէ եւ եսասիրութեանէ հրաժարիլ: Ազահուլթիւնը եւ եսասիրութիւնը կը խախտեն անհատին հաւասարակչուութիւնը եւ ան չի կրնար արդար ըլլալ:

Հինգերորդին անունը՝ «Ի՞նչ է Ողորմութիւնը» (124-130): Անիկա կը մեկնաբանէ «Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն» համարը (Մտ 5.7): Ողորմութեան Ս. Գրային «նշանակութեան խորք»ն է բարութիւնը, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, գութը, հաւատարմութիւնը եւ այլն): Հեղինակը գրած է.«Ողորմութիւնը աստուածային արդարութեան գաղափարին իրագործումն է մարդոց ընկերային կեանքին դառնութիւնները փարատելու եւ չարիքները վերցնելու համար: Ողորմութիւնը սիրոյ արտայայտութիւնն է, հիմնուած գիտակցութեան, նուիրումի եւ հաւատքի վրայ»:

Վեցերորդին անունը՝ «Սրտի Սրբութիւնը» (131-136): Անիկա կը մեկնաբանէ «Երանի այնոցիկ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն» համարը (Մտ 5.8): Հեղինակը գրած է.«Իննեակ երանիներուն ամենէն խորհրդաւորն է ասիկա, որովհետեւ սրտի սրբութիւնը պայման կը դրուի Աստուածը տեսնելու դէմ յանդիման»: Ի՞նչ կը նշանակէ սիրտը Աւետարանին մէջ: Ըստ հեղինակին.«մարդու բոլոր ներքին կեանքը, ներքին աշխարհը, ներքին կարողութիւնները»։ Մեղաւորը կը նայի, բայց չի տեսներ: Սուրբերը միայն կը

տեսնեն Սուրբը, գրած է Հեղինակը:

Եօթներորդին անունը՝ «Խաղաղութիւն» (135-148): Անիկա կը մեկնաբանէ «Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին» համարը (5.9): «...խաղաղութիւնը ամէնէն դիւրահասկնալի բառն է լեզուներու մէջ. եւ սակայն ամէնէն դժուար, եւ, եթէ կ'ուզէք, ամէնէն դժբախտ իրականութիւնն է այդ դիւրահասկնալի բառին նշանակութեան եւ ոգւոյն չգործադրուելը մարդկային ընկերութեան մէջ»: Հեղինակը հաստատած է, որ սէր, արդարութիւն եւ խաղաղութիւն «զիրար կը բացատրեն», եւ թէ անոնք «իրարմէ տարբեր իրողութիւններ չեն»: Առանց սիրոյ կարելի չէ արդար ըլլալ. նոյնպէս առանց արդար ըլլալու՝ խաղաղութիւն կարելի չէ: «Հոգեկան» այս երեք իրականութիւնները սերտօրէն իրարու կապուած են:

Ութներորդին անունը՝ «Հալածանքը» (144-148): Անիկա կը մեկնաբանէ «Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից» համարը (5.10): Հեղինակը խոր հայեացքով մը գրած է հետեւեալը. «Փրկիչը միշտ կը չարչարուի եւ կը վիրաւորուի անտարբերներու, տգէտներու, իմաստակներու մտքին, խօսքին եւ գործին մէջ: Եւ կը հալածուին անոնք որ կ'ոգորին եւ կը մաքառին այս դժբախտութիւններուն դէմ» (146-147):

Իններորդին անունը՝ «Նախատինքը» (149-155): Անիկա կը մեկնաբանէ «Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն, եւ ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յերկինս. զի այսպէս հալածեսցին զմարդարէսն որ յառաջ քան զձեզ էին» համարները (5.11-12): Հեղինակը «Նախատինք» բառը բացատրած է որպէս ատելութիւն: «որ կ'արտայայտուի արհամարհանքի, հայհոյանքի եւ այլ ձեւերու տակ» (150): Ան այս Երանին ներկայացուցած է իբր ամփոփումը նախորդ ութ Երանիներուն: Փանի որ տեսած է, թէ «Նախատինքը եւ հալածանքը պատրաստ է բոլոր անոնց համար որ Աղքատ են հոգիով, որ Սգաւոր են, որ Հեզ են, որ Արդարութեան քաղցն ու ծարաւը ունին, որ Ողորմած են, որ Սուրբ են սրտով, որ խաղաղարար են, որ կը հալածուին արդարութեան համար» (149):

Է.- Դասեր Աւետարանէն, Բ. Շարք, Անթիլիաս, 1936:

Գիրքը կը սկսի «Բացատրութիւն մը» գրութեամբ: Անկէ կ'իմանանք, որ գրքին բովանդակութիւնը կազմուած է յօդուածներէ, որոնք նախապէս լոյս տեսած են ՏԱԻՐՈՍ շաբաթաթերթին մէջ: Այս պարբերականը հրատարակուած է լման երկու տարի՝ 1918-1919, Պոստոն:

Հեղինակը «Հայաստանեայց Եկեղեցի» տիտղոսին ներքեւ տուած է շարքը իր յօդուածներուն, զորս ստորագրած է «Տէր Աթիկ Բջնեցի» անունով: Ան իր յօդուածներուն կամ «ղասեր»ուն մասին գրած է թէ՛ անոնք «կը բովանդակեն կրօնք, պատմութիւն, Հայց. Եկեղեցւոյ վերաբերեալ տօնական եւ ծիսական տեղեկութիւններ, ազգային շունչ, հոգեւոր ներշնչում, որոնք պէտք

են Սփիւռքի հայութեան նկարագիրը անեղծ ու անտխեղծ պահելու համար այսօր եւ վաղը»:

«Բացատրութիւն մը»ին կը յաջորդէ «Նախերգանք» վերնագրուած կոչ-խորհրդածութիւն մը: Անկէ հաստատում մը կ'արձանագրեմ այստեղ.«Ինչպէս որ քրիստոնեայ ուրիշ ազգերու, նոյնպէս մեր՝ հայ ազգին կեանքն ու կենցաղը կերտուած են Աւետարանի սկզբունքներով: Ուզենք չուզենք այս է իրողութիւնը: Եւ մենք հիմա, որչափ ալ մտահոգ եղած ըլլանք նորագոյն եւ մեր ազգին վերաբերեալ ու չվերաբերեալ խնդիրներով ու գիրքերով, ողջմտութիւնը կը պահանջէ, որ չմոռնանք Աւետարանի դասերը: Վասն զի, երբ մէկ կողմէն կը կարգանք ու կ'ուսումնասիրենք արդիական գիրքեր ու թերթեր՝ մեր անհատական ու ազգային կեանքին պարզ կամ կնճռոտ խնդիրները լուծելու եւ հարցերուն պատասխանելու համար, հարկ է մերթ ընդ մերթ Սուրբ Աւետարանին նայիլ, թէ Ան ի՞նչ կ'ըսէ»:

Գիրքը ունի երեք բաժիններ. Մեծպահք (10-65), Յինունք (66-118), Ազգային Պայծառակերպութիւններ (119-448: Այն պայծառակերպութիւններէն մի քանին յիշեմ. Վարդանանք, Ս. Էջմիածին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Թարգմանիչը Հայոց. Սահակ եւ Մեսրոպ):

Մեծպահքի բաժնէն առաջ կայ գլուխ մը, որուն անունն է «Առաջաւորք» (էջ 5-9):

«Առաջաւորք» կամ «Առաջաւորաց Պահք» կը նշանակէ «Առաջին Պահք»: Ասիկա հայոց մէջ հաստատուած առաջին պահքն է: Հաստատուած է Գրիգոր Լուսաւորչի կողմէ: Հինգ օրերու վրայ կ'երկարի: Հինգերորդ օրը, որ Ուրբաթ է, կը յիշէ Յովնանի մարգարէութեան մէջ նինուէացիներու ապաշխարութիւնը, որով անոնք փրկուելով կործանումէ՝ վերականգնեցան: Այն պահեցողութեամբ ապաշխարութիւնը՝ «նախնիք կապեր են Հայաստանի արթնութեան եւ վերածնութեան»: Այս պահքը ժողովուրդին մէջ ընդհանրապէս թիւրաբար ծանօթ է Ս. Սարգիսի Պահք անունով, որովհետեւ սուրբին տօնակատարութիւնը կանխող օրերուն կ'ըլլայ:

Մեծպահքը, ծանօթ նաեւ «Քառասնորդք», «Քառասնորդական Պահք», եւ «Աղուհացք» անուններով, մեծ է «որովհետեւ քառասնօրեայ է, վեր սովորական պահքերէն եւ պահեցողութեան կերպերէն. վասնզի նախնիք ո՛չ միայն ՞ծոմ կը բռնէին՞՝ այդ քառասուն օրերուն մէջ, այլ նաեւ լոկ աղ ու հաց կը ճաշակէին»:

Ի՞նչ է նշանակութիւնը Մեծպահքին:

«Քրիստոնեայ մարդը չի կրնար իր հասկցած գործի մը զոհել իր միւս գործերը, իր միւս պարտքերը: Հոգեւոր կարողութիւններու խնամքը մարդու ամէնէն առաջին գործերէն է: Եւ Աւետարանի հիմնական դասերէն է սսիկա: Մարդը միայն եւ միայն հացով եւ հացի գործով չ'ապրիր, այլ նաեւ՝ Աստուծոյ խօսքով, աստուածային ճշմարտութիւններով: Ահաւասիկ ա՛յս է Մեծպահքը, Փոքր պահքը եւ ամէն տեսակ պահքը եւ պահեցողութեան բո՛լն նշանակութիւնը»:

Մեծպահարկի ընթացքին հաւատաւորներն հոգեւորապէս «կը կազդուրուին» եւ Ծաղկազարդին «նոր ոյժով ու կորովով» եկեղեցի կու դան: Ծաղկազարդին «դասեր» են. ա, «Եթէ հաւատացեալ մը սիրէ իր Փրկիչը եւ սիրուի Անկէ, կ'ապրի, երկա՛ր կ'ապրի», նման Յիսուսի բարեկամ Ղազարոսին. բ, «...որեւէ իշխանութիւն, որեւէ կառավարութիւն, որեւէ գործ պէտք է հիմնուի ու հաստատուի Աստուծոյ Թագաւորութեան վրայ, որուն նկարագիրը բարոյական է. այսինքն՝ սէր, խաղաղութիւն, հաճութիւն, խնդութիւն, մաքրութիւն»: գ, «Աստուծոյ տունը աղօթքի տուն է, ամէն բան պէտք է այս նպատակին - աղօթքի - ծառայէ, եւ ամէն բան պէտք է որ յարմար եւ պատշաճ ըլլայ այս նպատակին արտայայտութեան»: դ, Հայ ազգին ոգին «աւետարանական» է:

Աւագ Ծաբաթը նուիրուած է «մեր օրհնեալ Փրկչին կեանքին վերջին դրուագներուն պատմութեան, օրհներգութեան, սրբացուցիչ ներգործութեան»: Թէ ինչո՞ւ համար այս շաբաթը «Աւագ» է, հեղինակը բացատրած է՝ «որովհետեւ Տէրն մեր Յիսուս Քրիստոսի փրկարար եւ քաւիչ գործերուն, տնօրինութեանց լրումն է, որովհետեւ այս եօթը օրերուն պիտի յաջորդէ Սուրբ Յարութեան Տօնն հրաշափառ, դարնանագեղ Ջատիկն Հայաստանեայց»:

Յինունքը, որ կը թարգմանուի յիսուն օրեր, «նուիրուած է հռչակելու Փրկչին Յարութիւնը եւ երգաբանելու Յարութեան փառաւոր հետեւանքները աշխարհի վրայ, եւ մա՛նաւանդ վերլուծելու Յարութեան հոգեկան եւ կրօնական նշանակութիւնները՝ քրիստոնեայ կեանքի զարգացման տեսակէտով»:

Հոգեգալուստով եկեղեցին կը տօնախմբէ աստուածային իմաստութիւնը, աստուածային գիտութիւնը եւ աստուածային շնորհքները: Անոր գիտակցական տօնախմբումը սէրը ամուր կը պահէ, եւ հաւատացող անհատը կամ ժողովուրդները հեռու կը պահէ մեղանչելէ «ճշմարտութեան Հոգիին դէմ»: Այլապէս սէրը, որ «ընկերային կեանքին ամէնէն բնական եւ ամէնէն զօրեղ» կապն է, «կը թուլնայ եւ մարդիկ իրարու հանդէպ կասկածոտ կ'ըլլան ու անվստահ. եւ անհասկացողութիւնն ու թիւրիմացութիւնը կը կործանեն սիրոյ կեանքին, հոգեկան կեանքին ամրութիւնները»:

Գրքին երրորդ բաժինը՝ «Ազգային Պայծառակերպութիւններ»ը՝ առանցքային միտք ունի կրօնականին աղերսաբար՝ ազգային կեանքին «վերաշինութիւն»ը: Եւ ազգային կեանքին վերաշինութեան ամէնէն կենսական արժէքը եկեղեցին է, որովհետեւ «մարդկային կեանքին ամէնէն ազնիւ եւ ամէնէն վեհ արտայայտութիւնները կրօնական են»:

Հայ ժողովուրդի ազգային կեանքին պայծառակերպութեան աղբիւրը Հայ եկեղեցին է իր աւանդութիւններով:

Ը.- Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939: Բ. տպ. Անթիլիաս, 1990:

Գիրքը երկու բաժին ունի: Առաջին բաժինը պատմութիւնն է Հայ Եկե-

ղեցւոյ կաթողիկոսներու այն շարքին, որ Կիլիկիոյ մէջ գահակալեց Գրիգոր Մուսաբէկեանէն մինչեւ Սահակ Խապայեան: Սահակ Խապայեան կաթողիկոսի յատկացուած գլուխը գրելու համար հեղինակը «բաւական նիւթեր հաւաքած եւ նօթեր» սեւագրած է, սակայն իր վախճանումը ծրագրիւր անաւարտ ձգած է: Հատորի հրատարակութեան առիթով Պետրոս Արք. Սարաճեան յանձն առած է խմբագրել այս բաժինը «պատրաստ նիւթերն օգտագործելով եւ իր սեփական ծանօթութիւններն ալ միացնելով» մինչ տակաւին Սահակ կաթողիկոս կը շարունակէր իր հայրապետական ծառայութիւնը (Նորայր Վրդ. Պօղարեան, *Զեկոյց*, էջ 769): Ահաւասիկ ցանկը կաթողիկոսներուն. Գրիգոր Մուսաբէկեան, Կարապետ Եւզովացի, Ստեփանոս Սարաճորեցի, Յովհաննէս Անտիոքացի, Յովհաննէս Թլկուրանցի, Յովհաննէս Քիլիսցի, Սիմէոն Զէյթունցի, Ղազար Զէյթունցի, Թորոս Սսեցի, Խաչատուր Չորիկ, Խաչատուր Զէյթունցի, Ազարիա Զուղայեցի, Յովհաննէս Անթէպցի, Պետրոս Կարկառեցի, Մինաս Սսեցի, Սիմէոն Սեբաստացի, Ներսէս Սեբաստացի, Թորոս Սեբաստացի, Խաչատուր Գաղատացի, Սահակ Քիլիսցի Մէլիանէճեան, Գրիգոր Ատանացի, Աստուածատուր Սասունցի, Մատթէոս Կեսարացի, Յովհաննէս Հաճընցի, Պետրոս Բերիացի, Գրիգոր Կեսարացի, Յովհաննէս Հաճընցի, Ղուկաս Աջապահեան, Միքայէլ Աջապահեան, Գաբրիէլ Աջապահեան, Եփրեմ Աջապահեան, Թէոդորոս Աջապահեան, Կիրակոս Աջապահեան, Եփրեմ Աջապահեան, Միքայէլ Աջապահեան, Կիրակոս Աջապահեան, Մկրտիչ Քէֆսիգեան Մարաշցի եւ Սահակ Խապայեան:

Երկրորդ բաժինը կը բովանդակէ երեք գլուխներ, որոնցմէ առաջինը «էջմիածին Եւ Սիս» վերնագրուած է (1125-րդ սիւնակէն 1252-րդ սիւնակ), երկրորդը՝ «Սիս Եւ Երուսաղէմ» (1253-րդ սիւնակէն 1268-րդ սիւնակ), իսկ երրորդը՝ «Աջ Եւ Աջապահ» (1269-րդ սիւնակէն 1342-րդ սիւնակ): Գրքի ավարտին կայ յաւելուած մը, որ «Մանր ուսումնասիրութիւններ» ունի, ապա կու գան բնագիրներ: «Մանր ուսումնասիրութիւններ»ու բաժնին մէջ կան հետեւեալ յօդուածները. Աջապահեան կաթողիկոսներ, Աջապահեանք եւ ծագումն Հայ Կաթողիկ Պատրիարքութեան ի Լիբանան, եւ Կիլիկիոյ Կաթողիկոսներուն կնիքները: Երկրորդ բաժնի բնագիրները՝ «Կանոնք Ս. Գր. Տաթեւացւոյն», «Պատճեն Վիրապեցի Կիրակոս Կաթողիկոսի Կոնդակին», «Պատճեն Ստեփանոս Պատրիարքի Կոնդակին» եւ նամակներ Սահակ կաթողիկոսէն՝ Մկրտիչ Իգմիրլեան Ամենայն Հայոց կաթողիկոսին, Գէորդ Արք. Սուրէնեանցին եւ Օրմանեան Սրբազանին: Նամակ մըն ալ Ամենայն Հայոց Մկրտիչ Իգմիրլեան կաթողիկոսէն՝ Սահակ Կաթողիկոսին:

Հայ եկեղեցւոյ պատմութեան առաւել ճշմարիտ հասկացողութեան նպաստող հատոր մըն է ասիկա:

Երկրորդ բաժնի գլուխները եւ բովանդակութիւնները.

«էջմիածին եւ Սիս»: 1441-ը այն թուականն է, երբ Ս. էջմիածնի Աթոռը «վերանորոգուեցաւ» կամ «վերահաստատուեցաւ»:

Հայոց կաթողիկոսական Աթոռը «երկրի քաղաքական պահանջներուն»

պատճառով հաստատուած է հոն՝ «ուր ազգին քաղաքական կառավարութիւնը կեդրոնացած է»։ Հեղինակը Հայ եկեղեցւոյ միակ կաթողիկոսէն զատ կաթողիկոսական աթոռներու ստեղծումը տեսած է իբր «տրամաբանական հետեւանք» («ինքնաստեղծ քանի մը բացառութիւններէ զատ») «ժամանակներու քաղաքական հարկադրութիւններուն»։ Հայոց Աթոռը երկար թափառումներէ ետք եկաւ հաստատուեցաւ Սիսի մէջ։ Լուսաւորչի ժառանգորդ հայոց կաթողիկոսը՝ Գրիգոր Մուսաբէկեան Սիս կը նստէր, երբ Ս. Էջմիածնի մէջ 1441-ին կատարուեցաւ ընտրութիւնը Կիրակոս Վիրապեցիի։

Հեղինակը վերլուծելով 1441-ի շարժումի գլխաւոր դէմքերու պատճառաբանութիւնները, գանոնք երկու գլուխի վերածած է.

Ա.- Կիլիկիոյ Աթոռին անկումը՝ կաթողիկ ազգեցութեան տակ։

Բ.- Հոգեւոր իշխանութեան մէջ կանոնական ու վարչական գեղծումները։

Նկատի ունենալով, որ 1441-ին Կիրակոս Վիրապեցին կաթողիկոս ընտրող ժողովը Գրիգոր Մուսաբէկեան կաթողիկոսի անձը եւ հանգամանքը չէ դատապարտած, հեղինակը ենթադրած է, որ Սիսի եւ Էջմիածնի միջեւ «երկուստեք հասկացողութիւն» մը գոյացած է, ըստ որուն՝ «Գրիգոր Մուսաբէկեան պիտի շարունակէր իր կաթողիկոսութիւնը մինչեւ իր վախճանումը, եւ յետոյ նոր կաթողիկոս մը պիտի չընտրուէր [Սիսի մէջ], քանի որ անգին Էջմիածնի մէջ կաթողիկոսական աթոռը վերահաստատուած էր եւ նոր կաթողիկոս մը ընտրուած. եւ կ'երեւի թէ ո՛չ միայն ինքն Մուսաբէկեան, այլ նաեւ Կիլիկիոյ եկեղեցականութիւնը ունէին այս հասկացողութիւնը»։ Իսկ թէ ինչո՞ւ հակառակ այս «հասկացողութեան» Կիլիկիոյ մէջ կաթողիկոսութիւնը շարունակուած է Մուսաբէկեան կաթողիկոսի մահէն ետք։ Ըստ հեղինակին՝ «իբրեւ ուղիղ հետեւանք պատմական դէպքերու» կաթողիկոսութեան շարունակումը Կիլիկիոյ մէջ «պէտք մը դարձած է»։ Այսինքն՝ Կիլիկիոյ հայութեան այն օրերուն ենթակայութիւնը Եգիպտոսի Մելիքութեան, անազին դժուարութիւններ պիտի ստեղծէր «հոգեւոր յարաբերութիւններ մշակելու արեւելեան Հայաստանի հեռաւոր մէկ անկիւնի հետ, որ ուրիշ բռնապետութեան ներքեւ կը տառապէր»։

«Սիս եւ Երուսաղէմ»։ Հեղինակը գրած է. «Երուսաղէմ եղած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմ, եւ ասիկա ո՛չ միայն այն ժամանակ երբ հայոց թագաւորութիւնը կը բարգաւաճէր Տաւրոսի անառիկ գահերուն վրայ եւ Սիս էր Աթոռ Ամենայն Հայոց Հայրապետութեան, այլ նաեւ երբ վերջաւ հայոց թագաւորութիւնն եւ վերահաստատուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը Ս. Էջմիածնի մէջ՝ 1441-ին, եւ Սիս եղաւ Աթոռ Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ»։ Թէ ե՞րբ Երուսաղէմ դադրած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմ ըլլալէ։ Հեղինակը յայտնած է, թէ «ճշգրիտ բան» չի գիտեր այն մասին։

«Աջ եւ Աջապահի»։ Ուսումնասիրութիւնը կը վերաբերի Գրիգոր Լուսաւորչի աջին եւ զայն պահող Աջապահեան ընտանիքին մասին։

Թ.- Հայ Եկեղեցի, Անթիլիաս, 1939 (գրքոյկ):

Գրքոյկին սկիզբը կայ «Զեկոյց» մը, որմէ կը տեղեկանանք, թէ հեղինակը 1933 թուականին փոքրիկ աշխատանք մը պատրաստած է «Հայ Եկեղեցին օտարներուն, մասնաւորաբար Լիբանանի եւ Սիւրիոյ ժողովուրդներուն ճանչցնելու նպատակով»: Գրքոյկը պատրաստուած է հայերէն: Ապա թարգմանուած է ֆրանսերէնի եւ արաբերէնի: Զոյգ լեզուներով թարգմանութիւնը լոյս տեսած է 1936-ին:

Գրքոյկին հայերէն հրատարակութիւնը կատարուած է «զանազան կողմերէ» եկող փափաքներու վրայ:

«Զեկոյց»ին կը յաջորդէ «Քրիստոնէութիւն» վերնագրուած փոխան յառաջաբանի մը: Շահեկան գրութիւն մըն է անիկա:

Բաբգէն կաթողիկոս քրիստոնէութեան մասին այսպէս բանաձեւած է իր միտքը. «...կրօններու պատմութիւնը ցոյց կու տայ, թէ քրիստոնէութիւնը եղած է ա՛յն միակ կրօնքը, որ աշխատած է իրագործել մարդկութեան երջանկութիւնը եւ կ'աշխատի դեռ: /Քրիստոնէութիւնը Եկեղեցին չէ': / Քրիստոնէութիւնը այս կամ այն նշանաւոր անձը կամ ազգը չէ': / Քրիստոնէութիւնը Աստուածաբանութիւն չէ': / Քրիստոնէութիւնը յարանուանութիւն չէ': / Քրիստոնէութիւնը իր ծագման եւ իր նպատակին մէջ կրթութեան եւ դաստիարակութեան մեթոտ մըն է, կեանքը վարելու կանոն մը, կենցաղագիտութիւն մը աստուածային, մէկ բառով, նոյնինքն մարդուն առաւելագոյն կեանքը կամ կատարեալ կեանքը...»:

Հեղինակը քրիստոնեայ աշխարհին մէջ հայ ժողովուրդը տեսած է որպէս «հոգեւին քրիստոնեայ», որուն վարքն ու բարքը, անհաստական փրկիսփայտութիւնը, առտնին կենցաղը, ընկերային ըմբռնումները եւ վերաբերմունքը՝ տողորուած են քրիստոնէական ոգիով: Իսկ անոր եկեղեցին՝ մարտիրոս եկեղեցի մըն է, քանի որ ոչ մէկ քրիստոնեայ ժողովուրդ իր կրօնքի սիրոյն, պատմութեան որեւէ շրջանին, իբրեւ ինքնուրոյն ազգ, միայն իր կողմէ այնքան գոհ տուած չէ, որքան Հայ եկեղեցին՝ թուրքերու ձեռքով, 1915-ին:

Գրքոյկը կարճ գլուխներով ներկայացուցած է Հայ եկեղեցւոյ պատմութիւնը, պաշտամունքը, ծիսական կեանքը, Ս. Գրքին տեղը, տպագրութիւնն ու դերը, եկեղեցւոյ վարչական կազմակերպութիւնը եւ այլն:

Ժ.- Բարեկարգութիւն Հայց. Եկեղեցւոյ, Անթիլիաս, 1940:

Ասիկա յօդուածաշարք մը եղած է նախապէս, որ լոյս տեսած է «Հայաստանի Կոչնակ» պարբերականին մէջ (1922-ի Յունիսէն-Հոկտեմբեր):

Աշխատանք մըն է «կանոնաւոր վերլուծութեան» ենթարկելու Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան խնդիրը եւ ցոյց տալու անոր «ներքին եւ արտաքին կողմերը եւ լուծման դժուարութիւններն ու գիւրութիւնները միանգամայն»:

Հեղինակը բացատրած է, թէ «բարեկարգութիւն» բառը գլխաւոր երկու նշանակութիւն ունի: Առաջին նշանակութիւնը «մատենագրական» կոչած է ան, իսկ երկրորդը՝ «Պատմական»:

Ըստ «մատենագրական»ին, այսինքն՝ ըստ մեր մատենագրութեան մէջ անոր տրուած հոմանիշներուն. բարևո՞վ կարգաւորութիւն, բարեձեւութիւն, կարգ բարի եւ գովելի, գեղեցիկ կարգ: Նաեւ՝ գեղեցիկ դասաւորութիւն, եւ գեղեցիկ դասակարգութիւն: Արդ, անհկա «կու տայ կարգուկանոնի իմաստը՝ վարք ու բարքի մէջ, կենցաղավարութեան մէջ, որեւէ գործ եւ պաշտօն կատարելու մէջ, ըլլայ անհատական, ըլլայ հաւաքական հանգամանքով»:

Պատմական նշանակութիւնով՝ հեղինակը հասկցած է Լուստերով ստեղծուած «Բարեկարգութիւն»ը, որ 16-րդ դարուն սկսաւ:

Հայ եկեղեցին պէտք ունի «մատենագրական» առումով բարեկարգուելու: Սակայն «եթէ Հայ ժողովուրդը դադրած է հաւատալէ, աւելորդ է խօսիլ եկեղեցական բարեկարգութեան վրայ. իսկ եթէ Հայ ժողովուրդը հաւատարիմ է Սուրբ Աւետարանի եւ Մայրենի եկեղեցւոյ ոգիին», ապա՝ կարելի է հաւատարիմ մնալով մեր եկեղեցւոյ աւանդութեանց՝ արդի լոյսերով բարեկարգել «հաւատքի արտայայտութեան կերպերը»:

Հեղինակը բարեկարգութեան կէտերը բաշխած է այսպէս. Ա) Սկզբունքի կէտեր (36-39). Բ) Արտայայտութեան կէտեր (40-53). Գ) Կարգուկանոնի կէտեր (54-79). Դ) Տոմարական կէտեր (79-88). Ե) Վարչական կէտեր (88-114). Զ) Ընկերային կէտեր (115-123). Է) Մասնաւոր կէտեր (123-136): Ասոնցմէ ետք իբրեւ ութերորդ մաս, որ «Յաւելուած» անուանած է, գրած է «Բարեկարգութիւն Ամերիկայի Հայաստանեայց եկեղեցւոյն» յօդուածը (136-144):

Ա.- Սկզբունքի կէտեր: Ասոնք հաւատքի կամ դաւանանքի ու վարդապետութեան կը վերաբերին:

Հեղինակը խոստովանած է, թէ ինք կը հաւատայ, որ քրիստոնէութեան ոգին պաշտօնական բանաձեւերու մէջ չամփոփուիր.«վասնզի քրիստոնէութիւնը վերածնեալ կեանքի մը յայտնութիւնն է եւ փորձառութիւնը»: Բայց նկատի ունենալով, որ այդ կեանքը «կարգ մը սկզբունքներու համաձայն կը բարգաւաճի», կը հաւատայ նաեւ որ «պաշտօնական բանաձեւեր, իբրեւ արտայայտութիւնները հաւատացեալ եւ երկիրը մարդոց հաւատքին եւ գիտութեան, անհրաժեշտ են», որպէսզի քրիստոնէութեան ներքին կեանքը ըլլայ ներդաշնակ եւ խաղաղ:

Ան յորդորած է, որ այս կէտերուն բարեկարգութիւնը ըլլայ այնպէս, որ «չեղծուի անբիծ եւ սուրբ հաւատքը» եւ Հայ եկեղեցւոյ ընդհանրական (Կաթողիկէ) եւ առաքելական նկարագիրը չխանգարուի:

Բ.- Արտայայտութեան կէտեր: 1, Պաշտամունքի պատշաճեցում արդի կեանքի պայմաններուն (ա, Համառօտում. բ, Պաշտամունքի կատարման մէջ ժողովուրդի մասնակցութիւն. գ, Ժողովուրդի մաքուր լեզուին ներմուծում եկեղեցւոյ մէջ. ինչպէս քարոզութեան պարագային, նաեւ ընթերցողաձեւերու): 2, Երաժշտութեան եւ երգեցողութեան արդիացում, այսինքն՝ «գեղարուեստին գիտական կիրարկումը մեր եկեղեցւոյ մէջ եւ թէ՛ ժողովրդականացումը»: 3, Մաշտոցի կամ Ծիսարանի վերաքննութիւն. արարողութիւնները չափազանց երկար են, հարկ է գանձնք պարգացնել՝ կրկնութիւններու խճողումը

վերցնելով: 4, Եկեղեցւոյ բեմին կազմակերպում:

Գ.- Կարգուկանոնի կէտեր: 1, Եկեղեցականներու պատրաստութիւն. «Հայց. Եկեղեցւոյ բարեկարգութեան մէջ, եկեղեցականաց պատրաստութիւնը պէտք է հիմնուի կոչման եւ ծառայութեան սկզբունքին վրայ»: Եկեղեցականներուն հոգեւոր եւ մտաւոր կարողութիւնները զարգացնել ու պատրաստել եւ հասցնել զանոնք ուսուցանելու եւ առաջնորդելու: 2, Կուսակրօնութեան եւ եկեղեցականներու կրկնամուսնութեան խնդիրներ. ա) Կուսակրօնութիւնը ազատ կամքի ընտրութիւն պէտք է ըլլայ. բ) Անիկա պայման պէտք է ըլլայ եկեղեցական աստիճաններու մէջ յառաջացման. գ) Նուիրապետութեան բոլոր աստիճանները հաւասարապէս բաց պէտք է ըլլան ամուրի եւ ամուսնացեալ եկեղեցականներուն առջեւ. դ) Աստիճաններուն մէջ յառաջացումը հիմնուելու է եկեղեցականին ծառայութեան «արդիւնք»ին վրայ. այսինքն՝ «անոր իրական եւ ապացուցեալ արժանիքին վրայ». ե) Այրիացեալ եկեղեցականներ պէտք է ազատ ըլլան վերամուսնանալու. սակայն մէկ անգամ միայն: 3, Վանական դրութեան բարեփոխում՝ «համաձայն մեր ազգային եւ եկեղեցական պէտքերուն»: Կուսակրօն կենցաղին տեղն է վանքը: Այն կենցաղը ամենանպաստաւորն է մտաւոր եւ հոգեւոր արժէքներու մշակման առումով: 4, Ծոմ, Պահք, Ապաշխարանք, Խոստովանանք. հեղինակը գրած է. «Ես անձնապէս գիտեմ եւ կը հաւատամ, որ այս կարգադրութիւնք, երբ կ'ըմբռնուին, կը հասկցուին եւ կը գործադրուին պարզութեամբ եւ հաւատարմութեամբ, մեծապէս եւ իրապէս բարերար ազդեցութիւն մը կ'ընեն մարդոց վրայ»:

Դ.- Տումարական կէտեր: Հարկ է յարգումը Նոր Տոմարին, որ «գիտութեան վճիռ»ն է: Եւ Հայ եկեղեցին անհրաժեշտ է, որ իր տօնացոյցը պատշաճեցնէ Նոր Տոմարի դրութեան (արդէն կատարուած: Միայն Երուսաղէմի մէջ կը շարունակուի Հին Տոմարը):

Ե.- Վարչական կէտեր: Կղերական բոլոր կարգերու պարզացում, արդիացում եւ պաշտօնավարութեանց յստակացում:

Զ.- Ընկերային կէտեր: ա) ամուսնական խնդիրներու վերաբերող կէտեր. բ) բարեկարգութիւն ժողովուրդի գիտակցութեան:

է.- Մասնաւոր կէտեր: 1, Հայ ազգը եւ Հայ եկեղեցին իրարմէ անանջատելի են, որովհետեւ «քրիստոնէութիւնը Հայ ժողովուրդին համար թէ՛ դպրոց մը եղած է իր կրթութեան եւ դաստիարակութեան, եւ թէ՛ միջոց մը իր տոհմային ինքնուրոյնութիւնը եւ ազգային գոյութիւնը պահելու եւ պաշտպանելու համար»: Հայ եկեղեցին կենսական անհրաժեշտութիւն մըն է Հայ ազգին համար. զայն կարելի է մէկզի դնել այն պատճառաբանութեամբ, թէ կրօնքը խղճի խնդիր է: 2, Հայ եկեղեցւոյ բարեկարգութիւնը ո՞վ պիտի կատարէ:

Պատմական եւ օրինական միջոցը ազգային-եկեղեցական ժողովն է, որուն մասնակցին «ժողովրդեան մէջէն անոնք, ըլլան եկեղեցական, ըլլան աշխարհական, որ հմուտ են բարեկարգութեան նիւթերուն, տողորուած են ազգային մաքուր զգացումներով, երկիւղածութեամբ կը սիրեն Մայրենի եկեղեցին, նախանձախնդիր են անոր պայծառութեան, եւ օժտուած են քրիստո-

նէական սուրբ սիրով»:

Հեղինակը իր օրերուն մէջ Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան նպատակով ազգային-եկեղեցական ժողովի ամենայարմար վայր տեսած է Երուսաղէմը:

Գրքի աւարտին կայ յաւելուած մը՝ «Հայց. Եկեղեցւոյ Բարեկարգութեան Խնդիրը» վերնագրուած (147-164):

Այս գրութեամբ Հեղինակը նպատակ ունեցած է «ուշադրութիւն հրաւիրել Հայ ժողովուրդի կրօնական դաստիարակութեան վրայ, որ (...) հի'մն է Մայրենի Եկեղեցւոյն Բարեկարգութեան եւ պէտք է դրուի բարեկարգութեան խնդիրներուն ամենէն սկիզբը»:

ԺԱ.- Վարդապետութեան Աստիճանները Հայ Եկեղեցւոյ Մէջ, Անթիլիաս, 1980:

Այս գիրքը նախ «Լոյս» շաբաթաթերթի 1905-ի 5 նոյեմբեր թիւին եւ ապա 1906-ի Յունուար ամիսէն սկսեալ 13 յաջորդական թիւերու մէջ տպուած է իբր յօդուածաշարք:

Գրքին սկիզբը Գարեգին Բ. Աթոռակից կաթողիկոս յառաջաբան գրած է, զոր վերնագրած է «Վարդապետական Աստիճանին Վերարժեւորման Հեռանկարով» (5-27):

Գարեգին կաթողիկոս այսպէս ամփոփած է գրքին նիւթը. «այս ուսումնասիրութեան (հեղինակը) պատմութեան պատասառին վրայ պատկերացուցած է վարդապետական աստիճանը իր այլազան երեսներով եւ լինելային ընթացքով, ելեւէջներով, լուսաւոր ու մութ կողմերով, զարգացումի հանգրուաններով, աստիճանի տրււթեան յատուկ ծիսական արարողութիւններու վերլուծական նկարագրումով, կենցաղային պայմաններու յարափոփոխ վիճակներով, կանոնադիտական տուեալներով, ուսման եւ ուսուցման կապուած ականգնութիւններով, քարոզչական առաքելութեան հանգամանքներով եւ գրական ստեղծագործական արտադրութիւններու նշումներով»:

Ընդհանրացած է այն թիւրիմացութիւնը, թէ վարդապետութիւնը կը պատկանի միայն Հայ եկեղեցւոյ կուսակրօն դասին: Հեղինակը գրած. «Վարդապետութիւնը (...) իր իսկ բնութեամբ, չէր կրնար միմիայն ամուրի եկեղեցականութեան վիճակը բացատրող տիտղոս մ'ըլլալ: Ուսուցանելու, քարոզելու, առաջնորդելու, մէկ խօսքով բեմի մարդը որոշող տիտղոս մըն էր այն, եւ այդ մարդը հաւասարապէս կրնար գտնուիլ թէ՛ ամուրի եւ թէ՛ ամուսնացեալ եկեղեցականներու մէջ»:

### Վերջաբան

Բարգէն կաթողիկոսի աստուածաբանական վաստակին ամենաշահեկան եզրերը անոր պատմաքննական պրպտումները եւ բարեկարգչական առաջադրութիւններն են:

Իբր պատմագէտ ան անցեալին նայած է կարելի առարկայականութեամբ, եւ նուազ զգացականօրէն ու նախատրամադրուածութեամբ: Հայ եկեղեցին, ինչպէս Հայ ժողովուրդը, իր պատմութեան պէտք է մօտենայ գաղափարաբանական կամ իտէալականացնող կամ կողմնակցական ակնոցները մէկդի դնելով: Անցեալին պեղումը թէեւ մեկնաբանութիւն մըն է, սակայն զգաստութիւն մը անհրաժեշտ է, որ զսպէ այլազան տրամադրութիւններու եւ շահերու պահանջները:

Իբր Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան տեսաբան, ան յառաջագէմ խորհողն է: Դէպի ապագայ գէթ դրական քանի մը քայլեր կրնան առնուիլ այն պարագային, եթէ նկատի առնուի Հայ եկեղեցւոյ բարեկարգութեան անոր տեսիլքը:

Անկասկած Հայ եկեղեցւոյ բարեկարգումը դեռ ժամանակի կը կարօտի եւ մանաւանդ՝ հաւատքի, յոյսի, սիրոյ եւ աշխատանքի: Հակառակ բարեկարգումի մասին բոլոր բարի ցանկութիւններուն եւ գաղափարներուն, անիկա տակաւին գրեթէ անկարելիութիւն մըն է. ո՛չ մեր ժողովուրդը (որ արդէն հետզհետէ անտարբեր կը դառնայ կրօնական կեանքին նկատմամբ) եւ ո՛չ ալ Հայ եկեղեցականութիւնը պատրաստ են անոր: Ահաւասիկ տագնապեցնող իրականութիւնը:


ԳԱՌՆԻԿ Ք. Գ.

**«Աշխատութիւնը քաղցր է երբ որ  
արդիւնաւորութեամբ կը պսակուի»:**

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ



*Տ. Բարգէն Ա. Կիլիկեցիական*  
1868 - 1936



## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԿԻ ՊԱՏՈՒԷՐԸ

« ... Աստուծոյ խօսքը քարոզէ եւ զայն յայտարարէ ամէն առիթով, առանց պատեհութիւնը կամ անպատեհութիւնը խորհելու, սխալները ուղղէ, եւ սաստէ կամ յորդորէ՝ մեծ համբերատարութեամբ ուսուցանելով: Որովհետեւ ժամանակ պիտի գայ, երբ մարդիկ ականջ պիտի չկախեն առողջ վարդապետութեան, այլ իրենց սեփական ցանկութիւններուն համապատասխանող եւ զիրենք հանոյացնող բաներու մասին խօսող ուսուցիչներ պիտի փնտռեն: Պիտի չուզեն ճշմարտութիւնը լսել, եւ առասպելներու ականջ տալով պիտի կորսուին: Բայց դուն միշտ արթուն եղիր, նեղութիւններու համբերէ, ատեարանիչի քու գործը ըրէ եւ ծառայութիւնդ իր աւարտին հասցոր»:

(Բ. Տիմ. Դ. 2-5)